ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ 2025

HELSINKI CITIZENS ASSEMBLY

National Endowment for Democracy
Supporting freedom around the world

Հեղինակային խումբ՝
Նազելի Մովսեսյան
Անուշ Պետրոսյան

Խմբագիր՝
Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) ներկայացնում է 2024 թվականին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տվյալները, որոնք Կազմակերպությունը հավաքագրել է զանգվածային լրատվամիջոցներով և պաշտոնական աղբյուրներով տարածված հաղորդագրությունների, ինչպես նաև Կազմակերպության կողմից պետական կառույցներին (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) ուղղված տեղեկատվության հարցումների պատասխանների, զինծառայողների հարազատների կողմից հայտնած տեղեկությունների հիման վրա:

<u>ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ</u>

Հիշեցնենք, որ պաշտոնական աղբյուրները զինծառայողների մահվան դեպքերը դասակարգում են ըստ ***զինվորական ծառայության հետ կապված լինելու*** եւ ***զինվորական ծառայության հետ կապված չլինելու*** հանգամանքի:

Զինծառայողների մահվան դեպքերը զինվորական ծառայության հետ կապված կամ չկապված դասակարգելիս, ըստ ***ՀՀ զինվորական դատախազության*** կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության, ***«...հաշվի են առնվում իրադրությունը, դեպքի կոնկրետ հանգամանքները եւ մահվան պատճառի առնչությունը ծառայողական պարտականությունների կատարման հետ»***:

Դեռևս 2019 թ. ՀՀ քննչական կոմիտեի կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ***«...յուրաքանչյուր դեպքով վարույթն իրականացնող քննիչի կողմից դեպքի հանգամանքների բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ ուսումնասիրության եւ քննության արդյունքում հաստատված փաստական տվյալների հիման վրա է միայն հետեւություն արվում՝ մահվան դեպքի զինծառայության հետ կապված լինելու կամ չլինելու հանգամանքը»:***

Զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերի վիճակի ուսումնասիրության շրջանակներում Կազմակերպությունը դիտարկում է ***բոլոր զինծառայողների մահվան դեպքերը****, անկախ այն հանգամանքից՝ դրանք պաշտոնապես դասակարգվել են զինվորական ծառայության հետ կապված, թե չկապված, նաև անկախ այն հանգամանքից, թե զինծառայողները մահվան դեպքը տեղի ունենալու պահին գտնվել են անմիջապես զինվորական պարտականությունների կատարման մեջ, թե՝ ոչ:*

*Կազմակերպության կողմից **բոլոր զինծառայողների մահվան դեպքեր**ի ուսումնասիրության հիմքում ընկած է զինծառայողի՝ որպես համապատասխան կարողություններ ու հմտություններ ունեցող և զինվորական հաստիք զբաղեցնող անձի կորուստը, որը պաշպանական գերատեսչությունը պետք է լրացնի նոր անձով:*

*Զինվորական ծառայության հետ չկապված մահացության դեպքերի հավաքագրումն ու վիճակագրության վարումը **կարևոր է նաև** այն պատճառով, որ, համաձայն Կազմակերպության ուսումնասիրությունների, բոլոր այն դեպքերում, երբ առողջական խնդիրներ ունեցող զինծառայողները մահանում են տանը, ազատ հերթափոխի կամ մահվան պահին զինվորական պարտականությունների կատարման մեջ չգտնվելիս, մահը պաշտոնապես դասակարգվում է զինվորական ծառայության հետ չկապված: Կարելի է ենթադրել, որ նման դեպքերում վարույթն իրականացնող մարմինը չի իրականացնում **զինծառայողի մահվան և զինվորական ծառայության պայմանների միջև պատճառահետևանքային կապը բացահայտելու հաստատում,** և առողջական խնդրի առաջացման կամ դրա սրման հետևանքով մահացությունների դեպքում **չի ուսումնասիրվում զինվորական ծառայության պայմանների հնարավոր ազդեցությունը**:*

ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2024 թվականին ՀՀ զինված ուժերում արձանագրվել է մահացության 40 դեպք հետևյալ պատճառներով.

- **13-ը՝ ավտովթար,**
- **9-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնել,**
- **5-ը՝ առողջական խնդիրներ,**
- **4-ը՝ հրադադարի ռեժիմի խախտում,**
- **3-ը՝ սպանություն,**
- **3-ը՝ դժբախտ պատահար (հոսանքահարում՝ 1, ձնահոսք՝ 1, հայտնի չէ՝ 1)**
- **2-ը՝ ավիավթար,**
- **1-ը՝ հրդեհ (պաշտոնապես դասակարգվել է որպես սպանություն):**

Զինծառայողների մահվան դեպքերի պատճառներն ըստ զինծառայության տեսակի կամ զինծառայողի կարգավիճակի

Դիտարկելով 2024թ. ՁՈՒ-ում մահվան դեպքերն ըստ **պատճառների** և զինծառայողների **ծառայության տեսակի՝** արձանագրում ենք, որ

ժամկետային զինծառայողների շրջանում մահացության պատճառներն են՝

- **ավտովթար** (5 դեպք),
- **ինքնասպանություն** (4 դեպք),
- **դժբախտ պատահար** (1 դեպք),
- **առողջական խնդիրներ** (1 դեպք),
- **սպանություն** (1 դեպք),

պայմանագրային զինծառայողների մահացության պատճառներն են՝

- **ավտովթար** (5 դեպք),
- **առողջական խնդիրներ** (2 դեպք),
- **դժբախտ պատահար** (1 դեպք),
- **ինքնասպանություն** (3 դեպք),

սպաների մահվան պատճառներն են՝

- **առողջական խնդիրներ** (1 դեպք),
- **ավտովթար** (2 դեպք),
- **դժբախտ պատահար** (1 դեպք),
- **ավիավթար** (1 դեպք),
- **ինքնասպանություն** (1 դեպք),
- **սպանություն** (1 դեպք),

պահեստազորայինի մահվան պատճառն է՝

- **հրդեհ (**պաշտոնապես որակվել է որպես սպանություն**,** 1 դեպք),

ավագ ենթասպայի մահվան պատճառն է՝

- **ինքնասպանություն** (1 դեպք),

կուրսանտի մահվան պատճառն է՝

- **ավիավթարը** (1 դեպք),

աշխարհազորային գումարտակի սպայի մահվան պատճառն է՝

- **ավտովթար** (1 դեպք),

զինվորական ծառայության մեջ ներգրավված Երկրապահ կամավորական միության (այսուհետ ԵԿՄ) անդամների մահվան պատճառն է՝

- **հրադադարի ռեժիմի խախտում** (4 դեպք),

- **սպանություն** (1 դեպք),
- **առողջական խնդիրներ՝** (հանկարծամահ,1 դեպք):

Հետևաբար՝ 2024 թ.-ի ընթացքում **ինքնասպանության և/կամ սպանության** հետևանքով մահվան դեպքեր արձանագրվել են **գրեթե բոլոր կազմերի զինծառայողների շրջանում** (ժամկետային, պայմանագրային, սպա, ավագ ենթասպա, ԵԿՄ անդամ): Վերստին արձանագրում ենք, որ ՀՀ զինված ուժերում **ոչ կանոնադրային հարաբերությունները և դրա հետևանքով մահվան դեպքերի խնդիրը համակարգային է բոլոր մակարդակներում և ծառայության բոլոր փուլերում:**

Առողջական խնդիրների հետևանքով ևս մահվան 5 դեպքերն արձանագրվել են գրեթե բոլոր կազմերի զինծառայողների շրջանում (ժամկետային, պայմանագրային զինծառայողների, սպաների, ավագ ենթասպաների, ԵԿՄ անդամների)**, ընդ որում դրանցից 3-ը,** որոնց հետևանքով մահացել են ժամկետային զինծառայող, սպա և ԵԿՄ անդամ, **պաշտոնապես դասակարգվել են զինվորական ծառայության հետ կապված: Սա նշանակում է, որ առկա են հավանական բացթողումներ զինծառայողների մոտ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման գործընթացքում:**

Համեմատության համար դիտարկենք 2023 թ. զինծառայողների մահվան դեպքերի պատճառները.

ժամկետային զինծառայողների շրջանում մահացության պատճառները՝

- **հրադադարի ռեժիմի խախտում** (8 դեպք),
- **ինքնասպանություն** (8 դեպք, այդ թվում՝ սահմանապահ զորքերի 1 զինծառայող),
- **զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտումներ** (16 դեպք),
- **դժբախտ պատահար** (1 դեպք),
- **սպանություն** (3 դեպք),

պայմանագրային զինծառայողների մահացության պատճառները

- **ավտովթար** (8 դեպք),
- **առողջական խնդիրներ** (7 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումներ** (3 դեպք),
- **զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում** (1 դեպք),
- **դժբախտ պատահարներ** (6 դեպք),
- **ինքնասպանություններ** (2 դեպք),

սպաների մահվան պատճառները՝

- **առողջական խնդիրներ** (3 դեպք),
- **ավտովթար** (4 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտում** (4 դեպք),
- **սպանություն** (1 դեպք),

ենթասպաների մահվան պատճառները՝

- **ավտովթար** (1 դեպք),
- **առողջական խնդիրներ** (1 դեպք),

պահեստազորայինների մահվան պատճառները՝

- **հրադադարի ռեժիմի խախտում** (4 դեպք),
- **ավտովթար** (1 դեպք):

զինվորական ծառայության մեջ ներգրավված ԵԿՄ անդամի մահվան պատճառը՝

- **առողջական խնդիրներ՝** (հանկարծամահ՝ 1 դեպք):

Այսպիսով՝ 2024 թվականին ժամկետային զինծառայողների մահվան հիմնական պատճառները եղել են ավտովթարները (5 դեպք) և ինքնասպանությունները (4 դեպք): Մինչդեռ 2023 թվականին ժամկետային զինծառայողների շրջանում առավել հաճախ արձանագրվել են հրադադարի ռեժիմի խախտման (8 դեպք), ինքնասպանության (8 դեպք) և զենքի, ռազմամթերքի ու վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտման (16 դեպք) հետևանքով մահվան դեպքեր:

Պայմանագրային զինծառայողների շրջանում 2024 թվականին մահվան դեպքերի մեծամասնությունը պայմանավորված է եղել ավտովթարներով (5 դեպք) և ինքնասպանություններով (3 դեպք), մինչդեռ 2023 թվականին պայմանագրային զինծառայողների մահվան պատճառ մեծապես հանդիսացել են ավտովթարները (8 դեպք), առողջական խնդիրները (7 դեպք) և հրադադարի ռեժիմի խախտումները (3 դեպք):

Սպաների շրջանում 2024 թվականին առավել տարածված մահվան պատճառները եղել են ավտովթարները (2 դեպք), իսկ 2023 թվականին՝ բացի ավտովթարները (4 դեպք), նաև առողջական խնդիրները (3 դեպք) և հրադադարի ռեժիմի խախտումը (4 դեպք):

2024 թվականին պահեստազորայինների շրջանում մահվան դեպքերը գրանցվել են հրդեհի (1 դեպք) հետևանքով, իսկ 2023 թվականին՝ հրադադարի ռեժիմի խախտման (4 դեպք) և ավտովթարի (1 դեպք) պատճառով:

ԵԿՄ անդամների շրջանում 2024 թվականին մահվան դեպքերի հիմնական պատճառը եղել է հրադադարի ռեժիմի խախտումը (4 դեպք), մինչդեռ 2023 թվականին գրանցվել է միայն մեկ դեպք՝ առողջական խնդիրների հետևանքով:

Այս տվյալները ցույց են տալիս, որ ավտովթարները և ինքնասպանությունները, ինչպես նաև հրադադարի ռեժիմի խախտումը և առողջական խնդիրները եղել են զինծառայողների մահվան հիմնական պատճառները թե՛ 2023 և թե՛ 2024 թվականներին: *(տե՛ս գծապատկեր 1)*

Գծապատկեր 1. 2023 և 2024 թթ զինծառայողների մահվան պատճառների համեմատություն



Նշենք, որ 2025 թ մարտի 7-ին զինվորական դատախազության աշխատանքների քննարկման ժամանակ ներկայացվել է[1], որ ՀՀ զինվորական դատախազության տվյալներով 2024 թ. մահացության դեպքերը ևս 40-ն են, մինչդեռ դրանց պատճառները որոշակիորեն տարբերվում են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի մոտեցումներից:

Զինվորական դատախազության հրապարակած տվյալներով դեպքերից 27-ը դասակարգվել են որպես զինվորական ծառայության հետ կապված, 13-ը՝ չկապված: 2024 թ. զինծառայողների մահվան 40 դեպքերից՝

- 11-ը ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով է,
- 8-ը՝ ինքնասպանություն և ինքնասպանության հասցնելու հետևանքով,
- 6-ը՝ հիվանդության,
- 5-ը՝ սպանության,
- 4-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման,
- 2-ը՝ ավիավթարի,
- 2-ը՝ դժբախտ պատահարի,
- 1-ը՝ մարտական մեքենաներ վարելու կանոնների խախտման,
- 1-ը՝ հրդեհի:

Աղյուսակ 1. 2024 թ զինծառայողների մահվան դեպքերի պատճառներն ըստ ՀՀ գլխավոր դատախազության և ՀՔԱՎ տվյալների

Մահվան դեպքերի պատճառները	Դատախազություն	ՀՔԱՎ
Ավտովթար /մարտական մեքենաներ վարելու կանոնների խախտում	12	13
Ինքնասպանություն	7	9
Առողջական խնդիրներ	6	5
Հրադադարի ռեժիմի խախտում	4	4
Սպանություն	5	3
Դժբախտ պատահար	3	3
Ավիավթար	2	2
Հրդեհ	1	1
Ընդամենը	**40**	**40**

[1] https://www.azatutyun.am/a/in-zohvel-e-40-zintsarayogh-orits-27-y-tsarayoutyan-het-kapvats-hangamankneroum-datakhaz/33339700.html

Դատախազության կողմից դեպքերից մեկը քննվում է որպես սպանություն, չնայած դեպքի նկարագրությունում նշված է, որ զինծառայողն «ինքն իրեն հասցրել է մահացու հրազենային վիրավորում», ուստի այս դեպքը Կազմակերպության կողմից ներառվել է ինքնասպանության հետևանքով մահվան դեպքերի թվում:

ՀՀ գլխավոր դատախազությունը Կազմակերպության պահանջած տեղեկության մյուս մասը տրամադրեց միայն ապրիլի 2-ին, սակայն ինչպես երևում է աղյուսակ 1-ից, կան մի շարք անհամապատասխանություններ կապված ՀՀ գլխավոր դատախազության և Կազմակերպության հավաքագրած տեղեկությունների հետ, որոնք, ի դեպ, 2025 թ հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում համադրվել են Գլխավոր դատախազության տվյալների հետ: Առկա տարբերությունները պայմանավորված են նրանով, որ 2025 թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում Գլխավոր դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալներում մահվան դեպքերի պատճառները այլ են, քան Գլխավոր դատախազության 2024 թ. տարեկան ամփոփ տվյալների դասակարգումները: Նշված տարբերության պառճառներին այժմ հնարավոր չէ անդրադառնալ, քանի որ նույնիսկ Գլխավոր դատախազության կողմից Կազմակերպության հարցմանն ի պատասխան տրամադրված տվյալները տարբերվում են նույն կառույցի կողմից հրապարակային ներկայացրած տվյալներից:

ՀՀ պետական կառույցների վարքագիծը ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հարցումներին պատասխանելիս

Կազմակերպությունը ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկությունը ստանում է ոչ միայն զանգվածային լրատվամիջոցների մշտադիտարկման, զինծառայողների հարազատների տրամադրած տեղեկությունների, այլև ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ գլխավոր դատախազությանն ու ՀՀ քննչական կոմիտեին ուղղված տեղեկատվության հարցումների պատասխանների հիման վրա:

ՀՀ պաշտպանության նախարարությունը տրամադրել է տեղեկություններ 2024 թվականի ընթացքում մահացության 26 դեպքերի մասին: ՀՀ ՊՆ-ի տրամադրած տեղեկությունները, սակայն, ամբողջական չեն, նախ այն պատճառով, որ զինվորական ծառայության հետ չկապված դասակարգվող դեպքերի մասին տեղեկություններ չեն տրամադրվել: Բացի այդ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի տրամադրել տեղեկություններ 2024 թ. հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերում արձանագրված մահվան

դեպքերի վերաբերյալ, իսկ հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել են միայն զինված ուժերում արձանագրված մահվան դեպքերի թվի և ծառայության տեսակի մասին տեղեկություն. զինվորական ծառայության հետ կապված կամ չկապված լինելու հանգամանքի մասին տեղեկություն ստանալու համար ՀՀ ՊՆ-ն առաջարկել է դիմել վարույթներն իրականացնող մարմիններին:

Այսպես, Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն 2024 թ. մահացած 26 զինծառայողներից 11-ը պարտադիր ժամկետային զինծառայողներ են, 7-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմի պայմանագրային զինծառայողներ, 5-ը՝ սպայական կազմի, 1-ը՝ պահեստազորում հաշվառված անձ է, 1-ը՝ ավագ ենթասպա և 1-ը՝ ԵԿՄ անդամ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի տրամադրվել զինծառայողների անունների, մահվան պատճառների վերաբերյալ տվյալներ, տեղեկությունների տրամադրումը ՀՀ ՊՆ-ի կողմից մերժվել է՝ համարելով դրանք գաղտնի՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների:

Դիտարկելով ՀՀ ՊՆ վարքագիծը վերջին 10 տարիների ընթացքում բազմիցս արձանագրել ենք, որ[2]՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը **ոչ միատեսակ վարքագիծ է դրսևորում մահվան վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում**:

Այսպես, 2015 և 2016 թթ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը տեղեկատվության հարցմամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ մահացած զինծառայողների անունները, ծառայության տեսակը, մահվան պատճառները և մահվան փաստերով հարուցված քրեական գործերի վերաբերյալ տվյալները ստանալու հարցով, ինչին ի պատասխան՝ ՊՆ-ի կողմից տեղեկատվության տրամադրումը մերժվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ ՊՆ 09.07.2015 թ. N 9-Ն հրամանով հաստատված «ՀՀ պաշտպանության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» 42-րդ և 43-րդ հոդվածների համաձայն՝ համարելով այն պետական և ծառայողական գաղտնիք:

2017 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ պաշտպանության նախարարությունից հայցել է տեղեկություններ միայն 2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մահացած և

[2] https://hcav.am/2021-mahvan-depqer/
https://hcav.am/hcav-am-23-01-2023-death-cases/
https://hcav.am/army-report-2023/

Կազմակերպությանը զանգվածային լրատվամիջոցներից և պաշտոնական հաղորդագրություններից հայտնի դարձած որոշ զինծառայողների մահվան դեպքերի փաստերով հարուցված քրեական գործերի ընթացքի մասին, ինչին ի պատասխան՝ ՀՀ ՊՆ կողմից տեղեկացվել է, որ անհրաժեշտ է դիմել ՀՀ ՔԿ կամ ՀՀ զինվորական դատախազություն:

2018 և 2019 թվականներին ՀՀ ՊՆ կողմից տեղեկությունը տրամադրվել է ըստ զինծառայողների անունների, սակայն չի տրամադրվել տեղեկություն զինծառայողների մահվան պատճառների մասին:

2020 թ-ի առաջին կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկությունը ՀՀ ՊՆ-ի կողմից տրամադրվել է ըստ անունների, սակայն 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերի վերաբերյալ տվյալները համարվել են գաղտնի՝ հղում կատարելով «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետին՝ «...Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը...»: 2020 թ. երկրորդ կիսամյակում և 2021 թ. առաջին կիսամյակում մահացության բոլոր (ոչ միայն պատերազմական գործողությունների հետևանքով) դեպքերի վերաբերյալ տվյալների տրամադրումը մերժվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և ՀՀ ՊՆ 2015 թ. հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 55-րդ կետերի պահանջների համաձայն:

2021 թ-ի երկրորդ կիսամյակից սկսած մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ-ի կողմից Կազմակերպության հարցումներին ի պատասխան տրամադրվել է միայն մահացած զինծառայողների թվի և զինծառայության հետ կապված և չկապված դասակարգված դեպքերի թվի վերաբերյալ տվյալներ: 2024 թվականի հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պաշտպանության նախարարությունը չի տրամադրել մահացության դեպքերի վերաբերյալ որևէ տեղեկություն, իսկ հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար տրամադրվել է տեղեկություն միայն մահվան դեպքերի թվի և զինվորական ծառայության տեսակի վերաբերյալ:

Ցվանեի[3] 20-րդ սկզբունքով սահմանվում է, որ «տեղեկատվության հարցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում պետական մարմինը պետք է հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետում գրավոր

[3] Ազգային անվտանգության և տեղեկատվության իրավունքի միջազգային սկզբունքներ. «Ցվանեի սկզբունքներ» | Helsinki Citizens' Assembly Vanadzor Office

ներկայացնի մերժման հստակ պատճառները», սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պահպանում նշված սկզբունքը զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները տրամադրելիս:

ՀՀ քննչական կոմիտեի (ՔԿ) կողմից Կազմակերպությանը տրամադրվել են միայն այն **20** զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց կապակցությամբ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում իրականացվում է քրեական վարույթ:

Քննչական կոմիտեի կողմից Կազմակերպության հարցմանն ի պատասխան չի տրամադվել զինծառայողների մահվան դեպքերի տվյալներն ըստ անունների և հնարավոր չէ եզրակացնել՝ արդյոք այդ 20 դեպքերը, որոնցով իրականացվում է մինչդատական վարույթ, համընկնում են ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրած տեղեկություններին: Այսինքն, հիմնավոր է պնդումը, որ զինծառայողների մահվան դեպքերի ծառայության հետ կապված կամ չկապված լինելու դասակարգման Քննչական կոմիտեի և Դատախազության տեղեկությունները կարող են տարբերվել մինյանցից: Այսինքն, եթե նույնիսկ ենթադրենք, որ քննչական կոմիտեում մինչդատական քրեական վարույթ իրականացվում է զինվորական ծառայության հետ կապված մահվան դեպքերով, ապա, նույնիսկ այս դեպքում, կա անհամապատասխանություն, քանի որ Դատախազության տվայլներով զինվորական ծառայության հետ կապված դասակարգվել են 27 զինծառայողների մահվան դեպքերը, այլ ոչ թե 20:

Կազմակերպությունը զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար ՀՀ քննչական կոմիտեին սկսել է դիմել 2016 թ-ից սկսած:

2016 թ. մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար ՀՀ ՔԿ կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին խորհուրդ է տրվել դիմել ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն, որն էլ իր հերթին ուղղորդել է՝ դիմել ՀՀ ՊՆ: ՀՀ ՊՆ-ն, այնուամենայնիվ, տեղեկությունը չի տրամադրել՝ համարելով այն գաղտնի և հղում կատարելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարի 09.07.2015 թ. N 9 հրամանով հաստատված «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» 42 և 43 կետերին:

2017 թ. ՀՀ ՔԿ-ն Կազմակերպության հարցմանն ի պատասխան տրամադրել է միայն թվային տվյալներ՝ ըստ զինծառայողների մահացության պատճառների:

2018 և 2019 թվականներին ՀՀ ՔԿ-ն տեղեկությունը տրամադրվել է մանրամասնությամբ՝ ըստ զինծառայողների անունների և մահվան պատճառների:

2020 թ. զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկությունը ՀՀ ՔԿ-ն կրկին տրամադրվել է ըստ անունների և մահվան պատճառների:

2021 թ. հուլիս ամսից հետո Կազմակերպության կողմից ՀՀ ՔԿ ուղարկված գրություններին ի պատասխան տրամադրվում է միայն հայցվող տեղեկությունների մի մասը:

Նկատենք, որ ՀՀ քննչական կոմիտեն Կազմակերպությանը չի տրամադրվում ***զինծառայողների անունների, դեպքերի տարածաշրջանի վերաբերյալ տվյալներ****:*

Ի տարբերություն 2023 թվականին ՀՀ քննչական կոմիտեի տված պատասխանի, 2024 թ-ին ՔԿ տրամադրել է մահացած զինծառայողների ծառայության տեսակը:

2015 և 2016 թվականներին **ՀՀ գլխավոր դատախազությունը** ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան տրամադրել է զինծառայողների մահացության դեպքերի թվային տվյալները՝ ըստ պատճառների: Ընդ որում՝ 2016 թվականին զինծառայողների անունները ուղղակի չեն նշվել հարցման պատասխանում, իսկ 2015 թ. զինծառայողների անունների և նրանց մահվան փաստերով հարուցված քրեական գործերի ընթացքի մասին տեղեկության տրամադրումը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից մերժվել է՝ հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ և 3-րդ կետերին՝ «...Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը... և եթե այն պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները»:

2017 թ. Դատախազությանն ուղղված հարցմամբ Կազմակերպությունը տեղեկատվություն է հայցել ոչ միայն 2017 թ. զինծառայողների մահացության ընդհանուր դեպքերի վերաբերյալ մանրամասների մասին (անուններ, պատճառներ, հարուցված քրեական գործեր և այլն), այլ նաև հարցման մեջ նշել է որոշ զինծառայողների անուններ՝ տեղեկատվություն պահանջելով վերջիններիս մահվան դեպքերի փաստերով հարուցված քրեական գործերի ընթացքի մասին, ինչին ի պատասխան ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից տրամադրվել է միայն թվային տվյալ 2017 թ. զինծառայողների մահացության դեպքերի մասին և անդրադարձ է կատարվել Կազմակերպության հարցման մեջ նշված առանձին զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի ընթացքին: Այսինքն, ՀՀ գլխավոր դատախազությունը չի տրամադրել մահացած զինծառայողների ամբողջական ցանկն ըստ անունների:

2018 և 2019 թվականներին ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից տեղեկությունը տրամադրվել է ըստ զինծառայողների անունների և պատճառների:

2020 թվականից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկությունը Դատախազության կողմից տրամադրվել է մանրամասնությամբ՝ ըստ անունների:

Անդրադառնանք ՀՀ գլխավոր դատախազության վարքագծին տեղեկությունների տրամադրման հարցում. 2024 թվականի դեկտեմբերի 25-ին Կազմակերպությունը դիմել է ՀՀ Գլխավոր դատախազություն՝ 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերում ժամկետային պարտադիր եւ պայմանագրային զինծառայողների մահվան դեպքերի թվի, մահվան դեպքերի հանգամանքների եւ դրանց վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթների մասին տեղեկություններ ստանալու հարցով, ինչին ի պատասխան 2025 թվականի հունվարի 10-ին Դատախազությունը հայտնեց, որ գրավոր հարցմանը կպատասխանի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի կարգավորմանը համապատասխան՝ դիմումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում:

Նշված լրացուցիչ ժամկետի ավարտից հետո՝ 2025 թ. փետրվարին 5-ին Կազմակերպությունը դիմեց ՀՀ գլխավոր դատախազութուն՝ պահանջվող տեղեկությունը օրենքով սահմանված ժամկետներում տրամադրելու հարցով: Հետևաբար՝ ՀՀ գլխավոր դատախազությունը չի պահպանել իր կողմից պահանջված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 30-օրյա ժամկետը:

Վերջին 10 տարվա ընթացքում առաջին անգամն է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը դրսևորում է նման վարքագիծ՝ օրենքով սահմանված ժամկետներում չտրամադրելով տեղեկությունը: 2025 թ մարտի 19-ին Կազմակերպությունն ի վերջո ՀՀ գլխավոր դատախազությունից ստացավ տեղեկատվության հարցման պատասխանը, մինչդեռ այս անգամ տրամադրվել է միայն Զինված ուժերում 2024 թվականին արձանագրված մահվան դեպքերի թիվը, ծառայության տեսակն ու պատճառները, իսկ զինծառայողների անունները, մահվան փաստերով հարուցված քրեական գործերի հոդվածներն ու նախկինում հարուցված քրեական գործերի ընթացքի մասին պահանջվող տեղեկությունը չի տրամադրել:

Դատախազության կողմից տրված տվյալների և Կազմակերպության ուսումնասիրության արդյունքում հավաքագրած տվյալների միջև կան ակնհայտ անհամապատասխանություններ և տարբերություններ:

Դատախազության և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տվյալների միջև առկա տարբերությունները պարզելու համար անհրաժեշտ է կատարել առանձին դեպքերի նույնականացում, սակայն, քանի որ Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած վերջին տվյալները լիարժեք չէին, 2025 թ. մարտի 20-ին Կազմակերպությունը հերթական տեղեկատվության հարցմամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ տրամադրելու հարցմամբ պահանջվող ամբողջական տեղեկությունը: Կազմակերպությունը ապրիլի 2-ին ի վերջո ստացավ 2024 թվականի վերջին եռամսյակում զինված ուժերում մահացության տվյալները նաև անվանական տարբերակով: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, Կազմակերպությանը ՀՀ գլխավոր դատախազության կողմից զինծառայողների մահվան թվի և պատճառների վերաբերյալ տրամադրած տվյալները տարբերվում են ՀՀ գլխավոր դատախազության հրապարակած նույն տվյալներից:

Այս առնչությամբ Կազմակերպությունը լրացուցիչ պարզաբանումներ կպահանջի ՀՀ գլխավոր դատախազությունից:

2020 - 2024 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՀՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Գծապատկեր 2. 2020 – 2024 թթ. զինված ուժերում մահացության դեպքերի քանակի և պատճառների համեմատությունը:



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, վերջին 5 տարիներին առավել մեծ թվով զինծառայողների մահվան դեպքեր արձանագրվել են ավտովթարի, առողջական խնդիրների, հրադադարի ռեժիմի խախտման, ինքնասպանության և սպանության դեպքերի հետևանքով:

Ինքնասպանության (ինքնասպանության հասցնելու) և սպանության հետևանքով մահվան դեպքեր.

2020 թվականին ինքնասպանության (ինքնասպանության հասցնելու) դեպքերը եղել են 18-ը (նշված տարվա մահվան դեպքերի 18%), 2021 թ՝ 9 (12%), 2022 թ.՝ 6 (9%), 2023թ՝ 10 (12%), իսկ 2024 թ. ինքնասպանության դեպքերը եղել են 9-ը (22%):

Սպանության դեպքերը 2020 թվականին՝ 4 զինծառայող (մահվան դեպքերի 4%-ը), 2021 թ՝ 11 զինծառայող (14%), 2022 թ.՝ 6 զինծառայող (9%), 2023 թ՝ 4 զինծառայող (5%), իսկ 2024 թ.՝մահացել է 3 զինծառայող (8%):

Աղյուսակ 2. 2020 – 2024 թթ սպանության և ինքնասպանության հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի թիվը ՀՀ զինված ուժերում

Տարեթիվ	Մահացության ընդհանուր թիվ	Ինքնասպանության և սպանության դեպքեր	Ինքնասպանության և սպանության դեպքերի տոկոսային արտահայտությամբ
2020	100	22	22 %
2021	76	20	26 %
2022	64	12	19 %
2023	83	14	17 %
2024	40	12	30 %

Ինչպես տեսնում ենք, վերջին 5 տարիներին ինքնասպանության և սպանության հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի թիվն առնվազն 12 է: Թեև 2024 թվականին զինված ուժերում մահացության դեպքերը նվազել են ավելի քան 50 %-ով, այնուամենայնիվ ինքնասպանության և սպանության դեպքերի տեսակարար կշիռը, ընդհակառակը, ավելացել է 2023 թվականի 17 %-ի համեմատ՝ կազմելով 30 %:

Ինքնասպանության և սպանության հետևանքով մահվան դեպքերը միասին կազմում են 2020 - 2024 թթ ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի մեկ երրորդ մասը (30 %-ը):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության ռազմավարական ուղղություններից է զինծառայողների, զորակոչիկների, նրանց հավասարեցված անձանց և ընտանիքների իրավունքների պաշտպանությունը: Իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ներպետեկան գործիքներներից բացի Կազմակերպությունն օգտագործում է միջազգային իրավական և քաղաքական հարթակները՝ Հայաստանում համակարգային խնդիրները բարձրաձայնելու և առաջարկելու դրանց լուծման ուղղությամբ հնարավոր քայլերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարումը էական նշանակություն ունի Հայաստանում մարդու իրավունքների համակագային խախտումները վերացնելու և իրավունքների պաշտպանության վիճակը բարելավելու հարցում:

<u>Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 9.2 կանոնը</u> հնարավորություն է տալիս հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային ինստիտուտներին ներկայացնել տեղեկանքներ, որոնք վերաբերում են վճիռների կատարմանը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո:

2023թ. հոկետմբերի 24-ին և նոյեմբերի 16-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը «Մուրադյանն ընդդեմ ՀՀ-ի» ՄԻԵԴ վճռի կատարման առնչությամբ ԵԽ Նախարարների կոմիտեին ներկայացրել է երկու հաղորդում, որոնցում անդրադարձել է ՀՀ զինված ուժերում կյանքի իրավունքի և վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի շարունակվող խախտումներին, մատնանշել է դրանց պատճառները, նպաստող պայմանները, ինչպես նաև առաջարկել է ՀՀ իշխանություններին և ԵԽ Նախարարների կոմիտեին ուշադրություն դարձնել, ի թիվս այլնի, **սպա-հոգեբանների ինստիտուտի կայացմանը և զարգացմանը**, ինչպես նաև պաշտպանական ոլորտում ժողովրդավարական վերահսկողության ապահովման համար՝ **ռազմական օմբուդսմենի գրասենյակի ներդնմանը**:

Զինված ուժերում զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի վերացման հարցում ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկվող գործությունների և զինծառայողների հոգեբանական աջակցության վերաբերյալ Կազմակերպության հաղորդումներով ներկայացված մտահոգությունները և խնդիրներն իրենց արտացլումն են գտել ԵԽ Նախարարների կոմիտեի 2023 թ. դեկտեմբերի 7-ի «Մուրադյանն ընդդեմ ՀՀ-ի» որոշման մեջ:

Մասնավորապես, Նախարարների կոմիտեն

1. ընդգծել է, որ այս գործերն առնչվում են իշխանությունների՝ դիմումատուների որդիների կյանքի իրավունքը զինվորական ծառայության ընթացքում պաշտպանելու պոզիտիվ պարտականությունը չկատարելուն, ինչպես նաև նրանց՝ 2001-2010 թվականներին գրանցված մահվան դեպքերի արդյունավետ քննության բացակայությանը:

Անհատական միջոցների վերաբերյալ

2. ընդգծելով, որ ընթացիկ քննության շրջանակում արագ և հանգամանալից գործողությունների ձեռնարկումը էական նշանակություն ունի ապացույցների կորստից խուսափելու և հանցագործության վաղեմության ժամկետը պահպանելու տեսանկյունից, կոչ է արել իշխանություններին անհրաժեշտ առաջնահերթություն տալ *Մուրադյանի, Անահիտ Մկրտչյանի, Նանա Մուրադյանի* և *Օհանջանյանի* գործերով քննությանը և արագ ավարտին հասցնել դրանք, ինչպես նաև հնարավորություն տալ նրանց՝ արձանագրված առաջընթացի մասին մանրամասն տեղեկատվություն տրամադրել:

Ընդհանուր միջոցների վերաբերյալ

3. <u>իշխանություններին առաջարկել է տրամադրել վիճակագրական տվյալներ վերջին հինգ տարիներին զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի քննության մասին:</u>

4. <u>իշխանություններին հորդորել է հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել՝ զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումների մեխանիզմի ներդրման ուղղությամբ և այդ մասին տեղեկացնել Նախարարների Կոմիտեին, ինչպես նաև Կոմիտեին զեկուցել Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի համապատասխան գործողությունների իրականացման վերաբերյալ:</u>

5. <u>իշխանություններին առաջարկել է տեղեկատվություն տրամադրել զինծառայողների նվաստացումների, ինչպես նաև զինվորական ղեկավարության կողմից նրանց նկատմամբ բուլինգի և վատ վերաբերմունքի կանխարգելման թիրախային միջոցառումների մասին:</u>

6. հաշվի առնելով, որ ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելման ռազմավարության նախագիծը մշակման փուլում է, առաջարկել է իշխանություններին Կոմիտեին տեղեկացնել Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների, ընդունման ժամկետների և հետագա իրականացման համար նախատեսված քայլերի մասին, ինչպես նաև ***<u>տրամադրել տեղեկատվություն զինծառայողներին պատշաճ հոգեբանական գնահատման և աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:</u>***

7. խնդրել է տեղեկատվություն տրամադրել առողջական լուրջ խնդիրներով անձանց զինվորական ծառայության զորակոչելը բացառելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին:

Գործերի քննարկումը վերսկսելու է ամենաուշը 2025 թվականին՝ Կոմիտեի DH (մարդու իրավունքներին առնչվող) նիստերից մեկի ժամանակ:

Առավել մանրամասն անդրադառնալով 2024 թվականին Զինված ուժերում արձանագրված ինքնասպանության և սպանության դեպքերին՝ արձանագրում ենք, որ մեկ տարվա ընթացքում առանձնապես արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել զինված ուժերում վատ, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումները վերացնելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը 2024 թ վերջին մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց, որ պաշտպանական գերատեսչության մարտահրավերներն են

ինքնասպանության, ինքնասպանության հասցնելու և սպանությունների դեպքերը, որի համար, ըստ նախարարի, էական աշխատանք է տարվում[4]:

Բացի այդ ՀՀ պաշտպանական գերատեսչությունը պնդում է, որ ոչ կանոնադրային հարաբերությունների դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ դեպքերի հանգամանքները, դրանց առաջացմանը նպաստող գործոնները, ծառայության կազմակերպման ու իրականացման գործընթացներում տեղ գտած թերություններն ու բացթողումները պարզելու համար:

Մինչդեռ ինքնասպանության և սպանության հետևանքով մահվան դեպքերի կանխման վրա այդ ծառայողական քննությունների ազդեցության մասին կարելի է կարծիք կազմել զինված ուժերում ինքնասպանության և սպանության նվազման միտում չունեցող դեպքերից:

Այսպես, 2024 թ. սպանություն որակված բոլոր դեպքերը և ինքնասպանություն որակված 9 դեպքերից 8-ը ՀՀ գլխավոր դատախազության կողմից համարվել են զինվորական ծառայության հետ կապված:

Ինքնասպանություն որակված մեկ դեպքում, ըստ ՀՀ գլխավոր դատախազության, զինծառայողը գտնվել է ազատ հերթափոխում:

2024 թվականին արձանագրված ինքնասպանության 9 դեպքերից վերջին 5-ը ինքնասպանության հասցնելու հոդվածով են:

Ինքնասպանություն որակված մահվան դեպքերին որպես կանոն նախորդում են վատ և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքեր, ինչի մասին են վկայում 2024 թ զինծառայողների մահացության մի շարք դեպքեր, որոնք ներկայացված են ստորև:

Ինքնասպանության դեպքերից մեկով պարտադիր ժամկետային զինծառայողը **օրեր շարունակ անձնակազմի ներկայությամբ, պարբերաբար նվաստացրել է նույն մարտական դիրքի մեկ այլ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը, հայհոյել է և հարվածել:** Արդյունքում, ըստ ՀՀ քննչական կոմիտեի, հայտնվելով անելանելի իրավիճակում զինծառայողը դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով մեկ կրակոց է արձակել կզակի շրջանում և ինքնասպան եղել:

Մեկ այլ ինքնասպանության դեպք տեղի է ունեցել 2024-ի հոկտեմբերի 6-ին: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության, հերթապահության կրման հետ կապված խնդիրների պատճառով զինծառայողը որպես հերթապահող հերթափոխի պետ, իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Վ.Հարությունյանի նկատմամբ **դրսևորել է դաժան վերաբերմունք, մի**

[4] https://www.azatutyun.am/a/papikyany-pndoum-e-och-martakan-paymanneroum-zintsarayoghneri-mahvan-och-bolor-depkern-en-tsarayoutyan-patcharov/33183567.html

քանի անգամ նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ արել, հարվածներ հասցրել[5], ինչի պատճառով Վ. Հարությունյանը գլխի հատվածում ինքն իրեն հրազենային վիրավորում է հասցրել և մահացել:

Ընդամենը մի քանի օր անց՝ հոկտեմբերի 13-ին արձանագրվեց ևս մեկ ինքնասպանության դեպք և մեղադրանք առաջադրվեց նույն զորամասի դասակի հրամանատարի (կոչումով լեյտենանտ), և նույն զորամասի շարքային ժամկետային զինծառայողներից մեկի նկատմամբ, ովքեր, ըստ նախաքննության տվյալների խախտել են մարտական հերթապահություն կրելու կանոնները, զենքով ինքնակամ թողել էին զորամասի պահպանության տեղամասի իրենց կրակային դիրքը և տեղամասի մեկ այլ կրակային դիրքում **խմբակային նվաստացրել են մարտական հերթապահության մեջ ընդգրկված, նույն զորամասի զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը:** Դրա հետևանքով նույն օրը, նույն կրակային դիրքում դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում, վերջինս իրեն ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով մեկ կրակոց է արձակել կզակի շրջանում և ինքնասպան եղել:

2024 թվականի նոյեմբերին ինքնասպանության ևս մեկ դեպք արձանագրվեց. ՌՈ կարգապահական գումարտակում հայտնաբերվեց պարտադիր ժամկետային զինծառայողի դին՝ կախված վիճակում: Ըստ Կազմակերպության տվյալների՝ դեպքին նախորդել է մարտական դիրքում տեղի ունեցած վիճաբանությունը դիրքեր սնունդ պատվիրելու, բջջային հեռախոս կրելու պատճառով, ինչի հիմքով մի շարք զինծառայողներ տեղափոխվել են ՌՈ կարգապահական գումարտակ, որտեղ էլ զինծառայողներից մեկը կատարել է ինքնասպանություն՝ կախվելով: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցներն այցելել են զինծառայողի ընտանիքին, զրուցել հարազատների հետ: Ըստ զինծառայողի հարազատներին հասած տվյալների, մարտական հերթապահության մեջ ընդգրկված 8 զինծառայողներին ուղարկել են կարգապահական վաշտ այն բանից հետո, երբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվել է ընդհանուր օգտագործման բջջային հեռախոս: Կարգապահական վաշտում գտնվելու ընթացքում զինծառայողներից մեկը վերցրել է մյուս զինծառայողի մոտ ժամանակավորապես գտնվող մեկ այլ զինծառայողին պատկանող մի գրքից էջեր է պատռել՝ որպես «զուգարանի թուղթ» օգտագործելու համար, ինչից հետո զինծառայողը լուրջ անհանգստություն է հայտնել այդ կապակցությամբ, քանի որ գիրքը, որն իրեն ժամանակավորապես տրամադրել էր զորամասի հեղինակություն ունեցող մի զինծառայող, պատկանում էր վերջինիս մորը: Ըստ մահացած զինծառայողի հարազատների, իրենց որդին կարող էր մտավախություն ունենալ զորամասում «հեղինակություն» հանդիսացող զինծառայողի

[5] investigative.am/news/zincarayogh-vahe-haroutyounyanin-inqnaspanoutyan-hascnelou-meghadranqov-kalanavorvel-e-verjinis-carayakicy

հետ հնարավոր վիճաբանություն ունենալուց, և որ վերջինս կարող էր վրեժխնդիր լինել իրենից կարգապագական գումարտակից զորամաս վերադառնալուց հետո:

Նշված գործով Կազմակերպության փաստաբանը ներգրավվել է որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

Ի դեպ, նույն զորամասում ևս զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի, ծեծի ենթարկելու, արժանապատվությունը նվաստացնելու դեպքերի մասին բարձրաձայնել է նաև մահացած զինծառայողի մայրը լրատվամիջոցներից մեկի հետ զրույցում, նշելով, որ «Կամբատը շարքում ծեծի է ենթարկել տղաներին, թե ինչու եք դիրքերում պատվերներ կատարում»[6]:

<u>Առանձին ուշադրության է արժանի զինված ուժերի զորամասերում «հեղինակությունների» ինստիտուտի շարունակական առկայությունը, որը քրեական բարքերի ակնհայտ դրսևորում է:</u>

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2025 թ. հունվարին հայտարարեց[7], որ ներկայումս բանակում բոլոր խնդիրները բխում են քաղաքացիական կյանքից, բարքից: ***Մինչդեռ զինված ուժերում քրեական բարքերի վերացման համար անհրաժեշտ է մշակել արդյունավետ մեխանիզմներ և ապահովել դրանց անվերապահ իրականացումը:***

Այդպիսի մեխանիզմների շարքում կարող են լինել քրեական ու քրեածին բարքերի դրսևորումների նկատմամբ պատժամիջոցների համարժեք կիրառումը: Միաժամանակ, անհրաժեշտ է ապահովել արդար դատաքննության իրավունքը: Բանակում քրեական բարքերի դրսևորումները վերացնելու համար անհրաժեշտ է բարեփոխել զինված ուժերի անձնակազմի կառավարման համակարգը, հրամանատարները պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում՝ զինվորական ծառայության առավել արդյունավետ իրականացման նպատակով: Զինված ուժերում քրեական բարքերի դեմ պայքարը չի կարող սահմանվել միայն պատժամիջոցներով: Կարևոր է նաև շարունակական մշտադիտարկման իրականացումը՝ միաժամանակ հաշվի առնելով սուբյեկտիվ ու օբյեկտիվ պատճառները, որոնք կարող են ազդել նման բարքերի զարգացման վրա: Նշված մեխանիզմները պետք է հիմնվեն զինծառայողների իրավունքների և արժանապատվության պաշտպանության սկզբունքների վրա:

[6] https://epress.am/2024/12/16/commentary-from-the-mother-of-the-deceased-narek-grigoryan.html
[7] https://www.1in.am/3521247.html, https://factor.am/854112.html

Ինչ վերաբերում է սպանության դեպքերին, ապա նշենք, որ Կազմակերպության ուսումնասիրության արդյունքում հայտնի դարձած սպանության բոլոր երեք դեպքերը տեղի են ունեցել մարտական հերթապահության ընթացքում:

ՀՀ քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության համաձայն՝ 2025 թ. հունվարի 9-ին սպանվել է ՀՀ ՊՆ N զորամասի սպա, ով, հրազենային մահացու վիրավորումը ստացել էր նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողի արձակած կրակահերթից: Ավելի ուշ՝ 2024 թվականի հուլիսին ՀՀ քննչական կոմիտեն մանրամասներ հրապարակեց, համաձայն որի՝ դեպքի օրը կոչումով լեյտենանտ զինծառայողը ծառայողական հարցերի շուրջ՝ **դիրքում քնելու կապակցությամբ առաջացած խոսակցության ժամանակ, վիրավորական արտահայտություն է հնչեցրել ծառայակցի հասցեին: Վերջինս վրեժ լուծելու նպատակով, հանձնելով մարտական հերթափոխը, մտել է մարտական դիրքի գետնատնակ և լիցքավորելով իրեն ամրակցված ինքնաձիգը՝ մոտեցել է պառկած վիճակում գտնվող լեյտենանտին, որից հետո նախ՝ մենահատ, ապա կրակահերթ է արձակել վերջինիս ուղղությամբ՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:**

<u>Վերոնշյալ դեպքերը վկայում են, որ զինված ուժերում արձանագրվող վատ, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումները կրում են շարունակական բնույթ, որոնք պատճառ են դառնում զինծառայողների սպանության և ինքնասպանության դեպքերի, ուստի առավել քան կարևոր է բոլոր դեպքերով ծառայողական քննության, զինված ուժերում բարոյահոգեբանական վիճակի բարելավման ուղղությամբ արդյունավետ աշխատանքների իրականացումը և իհարկե սպա-հոգեբանի ինստիտուտի կայացումը և դրա դերի բարձրացումը:</u>

Զինված ուժերում դեռևս 2013 թվականից ներդրվել էր սպա-հոգեբանների ինստիտուտը: Ըստ Պաշտպանության նախարարության՝ լրատվամիջոցներից մեկին հայտնած տվյալների, սպա-հոգեբանն ի թիվս այլ գործառույթների պետք է մասնակցի ստորաբաժանումների և առանձին զինծառայողների հոգեբանական պատրաստության գործընթացին, զինծառայողների շրջանում իրականացնի հոգեբանական աջակցման աշխատանքներ, պետք է կատարի ուսումնասիրություններ ստորաբաժանումներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական գործընթացների և առանձին զինծառայողների վարքի կանխատեսումների վերաբերյալ:

Սակայն, այս ինստիտուտը դեռևս արդյունավետ չի գործում, ինչի մասին վկայում են զինված ուժերում քրեական հանցագործությունների առկայությունը, սպանությունները, ինքնասպանությունների կամ ինքնասպանության հասցնելու դեպքերը և ոչ կանոնադրային հարաբերությունները:

2025 թ. փետրվարի 18-ին Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից իրականացված «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի փակման արարողության ժամանակ ներկայացվեց «Համազգեստով Քաղաքացի» բջջային հեռախոսի հավելվածը, որը ստեղծվել է ՀՀ ՊՆ հետ համագործակցությամբ և որով զինծառայողները հնարավորություն են ունենում անանուն հաղորդումներ ներկայացել իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ: Ի դեպ, ԵԽ նախարարների կոմիտեի 2023 թ-ին ՀՀ կառավարությանը տրված հանձնարարականների թվում էր նաև ***զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումների մեխանիզմի ներդրման ուղղությամբ շտապ քայլերի ձեռնարկումը:***

Հավելվածում ներառված են նաև իրավական ակտեր, օրենքներ, Կառավարության որոշումներ, ՊՆ նախարարի հրամաններ, որոնք առնչվում են զինվորական ծառայությանը, *զորակոչիկների իրավունքներին, վարժական հավաքներին, կյանքի իրավունքին, խոշտանգումների արգելքին, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքին, ազատության և անձեռնմխելիության իրավունքին, արդար դատաքննության իրավունքին, պատժին՝ բացառապես օրենքի հիման վրա, մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին, մտքի և խղճի դավանանքի, արտահայտվելու ազատությանը, խտրականության արգելքին, կարգապահական վարույթին:*

Խնդիրն այն է, որ ՀՀ զինված ուժերում «սմարթֆոն» տեսակի բջջային հեռախոսների կիրառման սահմանափակումների պատճառով ժամկետային զինվորական ծառայություն իրականացնողները հնարավորություն չեն ունենա անձամբ ներկայացնել իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ ահազանգերը: Փոխարենը, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցչի, ժամկետային զինծառայողների ահազանգերը կարող են ներկայացվել վերջիններիս ընտանիքի անդամների կողմից, ինչը մինչ այդ էլ կիրառվում էր: Կարևորում ենք զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ուղղված նոր մեխանիզմների ներդրումը, բայց և, հաշվի առնելով գործառույթի միջնորդավորված լինելու հանգամանքը, կարծում ենք մեխանիզմը բավարար չափով և օբյեկտիվորեն չի կարող վերհանել զինված ուժերում պարտադիր ժամկետային զինծառայողների իրավունքների խախտման դեպքերը:

Առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքեր

2020 թվականին առողջական խնդիրների պատճառով մահացել է 25 զինծառայող (25%), 2021 թ.՝ 17 զինծառայող (22%), 2022 թ.՝ 17 զինծառայող (26%), 2023 թ.՝ 12 զինծառայող (14%), իսկ 2024 թ.՝ 5 զինծառայող (12%):

Աղյուսակ 3. 2020 – 2024 թթ առողջական խնդիրների հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի թիվը ՀՀ զինված ուժերում

Տարեթիվ	**Մահացության ընդհանուր թիվ**	**Ինքնասպանության և սպանության դեպքեր**	**Ինքնասպանության և սպանության դեպքերը տոկոսային արտահայտությամբ**
2020	100	25	25 %
2021	76	17	22 %
2022	64	17	27 %
2023	83	12	14 %
2024	40	5	13 %

Առողջական խնդիրներով պայմանավորված մահացության դեպքերի մեծամասնության մասին, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին պաշտոնական տեղեկություն չի տարածվել:

2024 թ. առողջական խնդիրների հետևանքով մահացած 5 զինծառայողներից 3-ի (1 պայմանագրային զինծառայողի, 1 ժամկետայինի, 1 ԵԿՄ անդամի) մահվան դեպքը Դատախազության կողմից համարվել է ծառայության հետ կապված: Մյուս 2 դեպքերը, որոնց հետևանքով մահացել են 2 պայմանագրային զինծառայողներ, համարվել են զինվորական ծառայության հետ չկապված:

Ժամկետային զինծառայողի մահվան դեպքը տեղի է ունեցել Սյունիքի մարզի զորամասերից մեկում: Պարզվել է, որ զորամասում՝ շարքում կանգնած ժամանակ, զինծառայողի ինքնազգացողությունը հանկարծակի վատացել է և վերջինս գիտակցության կորուստ է ունեցել: Նա տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, որտեղ մոտ մեկ ժամ անց մահացել է:

Կազմակերպությունը բազմիցս բարձրաձայնել է զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների ոչ պատշաճ բժշկական հետազոտությունների մասին, ինչի հետևանքով զինծառայողների առողջական խնդիրները չեն հայտնաբերվում վաղ փուլում և հետևաբար դժվարանում կամ անհնարին է դառնում բուժումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն զինվորական ծառայության ընթացքում օրենքով սահմանված առողջական վիճակի հսկողություն չիրականացնելուն կամ ոչ պատշաճ իրականացնելուն, այլ

նաև զինծառայողների առողջական գանգատները անպատասխան թողնելուն, ինչի ապացույցն է նաև 2025 թվականի փետրվարի 22-ին հոսպիտալում «կայծակնային» ընթացք ունեցող թոքաբորբից պարտադիր ժամկետային զինծառայողի մահվան դեպքը. նշված դեպքում զինծառայողի հարազատները պնդում են, որ զինծառայողը շաբաթներ շարունակ գանգատվել է մրսածությունից ու ջերմությունից, սակայն վերջինիս նշանակել են դիրքերում մարտական հերթապահության, որտեղ էլ վիճակը կտրուկ վատացել է, իսկ հաջորդ օրը զինծառայողը մահացել է:

Կազմակերպությունը ավելի քան 20 տարի շարունակ տրամադրում է իրավական խորհրդատվություն զորակոչային տարիքի անձանց, ովքեր զորակոչի շրջանակներում բախվում են առողջական վիճակի ոչ համալիր և թերի հետազոտությունների իրականացման, զորակոչային բժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկների իրական առողջական վիճակին չհամապատասխանող ախտորոշումների տրամադրման և այլ խնդիրների: Զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների մահվան դեպքերը փաստում են, թե որքան կարևոր է զորակոչի ընթացքում անձանց առողջական վիճակի օբյեկտիվ և համալիր հետազոտությունների իրականացումը:

Միաժամանակ մտահոգիչ է զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների առողջական վիճակի գանգատների կարևորության անտեսման և դրանց լուրջ չվերաբերվելու արատավոր պրակտիկան հրամանատարների կողմից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2024 թ տարեկան հաղորդման մեջ ևս նշվում է, որ Պաշտպանին հասցեագրվող բողոքների մեծ մասը վերաբերում են հենց զինծառայողների առողջական խնդիրներին ու պատշաճ բժշկական հետազոտություններ ու բուժումներ տրամադրելուն: ՄԻՊ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռազմաբժշկական համակարգը գործում է ծանրաբեռնված, երբեմն զինծառայողների որոշակի առողջական խնդիրներին արձագանքելը ձգձգվում է (օրինակ, բուժկետը, հոսպիտալները կամ կոնկրետ բժիշկ-մասնագետը լինում են գերծանրաբեռնված, կամ երբեմն առկա են լինում կոնկրետ բժիշկ-մասնագետի կամ սարքավորման համալրման անհրաժեշտություն և այլն) և զինծառայողը բուժում պահանջող առողջական խնդիրներով շարունակում է ծառայությունը, ինչն անթույլատրելի է գնահատվել նաև ՀՀ ՄԻՊ կոմղից: Վերոնշյալի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը ՀՀ ՄԻՊ-ին հայտնել է, որ իրականացվում են զինապարտների և զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման ու փորձաքննությունների

ամբողջական թվայնացման աշխատանքներ, ինչը վերջնարդյունքում դրական ազդեցություն է ունենալու գործընթացի պատշաճ իրականացման և զինվորական ծառայության կազմակերպման վրա:

Ինչպես բազմիցս ընդգծել ենք «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը սահմանում է զինծառայողների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, բուժկանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ օրենքի հոդված 344-ը սահմանում է, որ զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝

- անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում,
- զինծառայողների բուժզննում,
- զինծառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ:

Զինված ուժերում առողջական խնդիրների պատճառով զինծառայողների մահացության դեպքերը վկայում են այն մասին, որ զինծառայության ընթացքում կա՛մ պատշաճ և որակյալ պլանային բժշկական զննություններ չեն իրականացվում, կա՛մ դրանք իրականացվում են ոչ արդյունավետ՝ առողջական խնդիրները (այդ թվում նաև՝ քրոնիկ հիվանդությունները) վաղ փուլում հայտնաբերելու և դրանց զարգացումն ու անդառնալի հետևանքները կանխելու տեսանկյունից:

Բացի այդ, պարտադիր ժամկետային զինծառայողներին զինվորական ծառայությունից զորացրելուց առաջ անհրաժեշտ է ապահովել զինծառայողների արդյունավետ բժշկական սպասարկումն ու իրականացնել առողջական վիճակի համալիր և ամբողջական հետազոտություններ՝ ինչպես նախատեսված է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում: Զորակոչի ընթացքում հետազոտությունների որակյալ իրականացումը և հետագայում՝ զորացրվելուց առաջ զինծառայողի առողջական վիճակի համեմատությունը հնարավորություն կտա հստակ արձանագրել առողջական խնդրի պատճառահետևանքային կապը զինվորական ծառայության հետ՝ միաժամանակ հնարավորություն ստեղծելով զինծառայողների համար ստանալ համապատասխան օգնություն և սպասարկում զորացրվելուց հետո:

Անհրաժեշտ է նաև օրենքով սահմանել զինվորական ծառայության հետ կապված առողջական խնդիրների հետևանքով տուժած զինծառայողներին և նրանց ընտանիքներին

փոխհատուցում տրամադրելու կարգը՝ զինծառայողների առողջական վիճակի վատթարացման հիմքով:

Ավտովթարի հետևանքով մահվան դեպքեր

2020 թ. ավտովթարների հետևանքով մահացել է 22 զինծառայող (մահվան դեպքերի 22%), 2021 թ՝ 15 զինծառայող (20%), 2022 թ.՝ 17 զինծառայող (26%), 2023 թ.՝ 14 զինծառայող (17%), 2024 թ. 13 զինծառայող (32%):

Աղյուսակ 4. 2020 – 2024 թթ ավտովթարի և ճանապարհային պատահարների հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի թիվը ՀՀ զինված ուժերում

Տարեթիվ	Մահացության ընդհանուր թիվ	Ինքնասպանության և սպանության դեպքեր	Ինքնասպանության և սպանության դեպքերը տոկոսային արտահայտությամբ
2020	100	22	22 %
2021	76	15	20 %
2022	64	17	27 %
2023	83	14	17 %
2024	40	13	33 %

Զինված ուժերում շարունակում են մտահոգիչ մնալ տրանսպորտային միջոցներ վարելու կանոնների խախտման հետևանքով միջադեպերը, որոնց հետևանքով վերջին հինգ տարիներին առնվազն 13 զինծառայող է մահացել:

2024 թվականին արձանագրված 13 դեպքերից 8-ը զինվորական դատախազության կողմից որակվել են որպես զինվորական ծառայության հետ չկապված, մյուս 5-ը՝ կապված:

Զինվորական ծառայության հետ կապված 2 ավտոպատահարների հետևանքով մահացել է 5 զինծառայող: Մասնավորապես՝ ապրիլի 12-ին ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայողներին տեղափոխող «Ուրալ» մեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից և հայտնվել հարակից ձորակի տարածքում, դեպքի հետևանքով 4 զինծառայող է մահացել, ևս 20 զինծառայող ստացել են մարմնական վնասվածքներ[8]:

«Ուրալի» ղեկին եղել է ժամկետային զինծառայող, ով վարորդական իրավունքի A և C կարգեր է ունեցել: Մինչդեռ, *«Ճանապարհային երթեվեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի*[9] 27-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն *« «C» և «CE» կարգերի, ինչպես նաև*

[8] https://armenpress.am/hy/article/1134679
[9] https://www.arlis.am/documentView.aspx?docid=190353

«C1» և «C1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական ունեցող անձանց այդ կարգերի և ենթակարգերի տրանսպորտային միջոցներով (բեռնատարներով) թույլատրվում է փոխադրել ոչ ավելի, քան 8 ուղևոր, իսկ դրանից ավելի ուղևոր փոխադրելու դեպքում վարորդը պարտավոր է ունենալ նաև «D» կամ «DE» կարգի կամ «D1» կամ «D1E» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վկայական»: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *«Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի… D» կարգի և «D1» … ենթակարգի վկայական տրվում է … 21 տարին լրացած, իսկ Հայաստանի Հանրապետության զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված լինելու դեպքում՝ 19 տարին լրացած, և «B» կամ «C» կարգի կամ «C1» ենթակարգի՝ տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական իրավունքի վկայական ունեցող անձանց»:*

Փաստացի, օրենքի պահանջն է, որ նշված կարգերն ու ենթակարգերը տրամադրվեն միայն 21 տարին լրացած, իսկ զինված ուժեր զորակոչվածների դեպքում՝ 19 տարին լրացած անձանց: Մինչդեռ ծանր վնասվածքներով հիվանդանոց տեղափոխված «Ուրալ» մակնիշի մեքենայի վարորդը դեպքի պահին դեռևս 19 տարեկան չէր:

«Ուրալ» ավտոմեքենայում չեն պահպանվել նաև անվտանգության կանոնները: Ինչպես լրատվամիջոցներից մեկի հետ զրույցում նշել է մահացած զինծառայողներից մեկի մայրը, զինծառայողները չեն կրել պաշտպանիչ սաղավարտներ, ուստի հիմնականում վնասվածքներ են ստացել գլխի հատվածում, որն էլ մահվան պատճառ է հանդիսացել[10]:

Մեկ այլ զինծառայողի մայրը լրատվամիջոցի[11] հետ զրույցում պատմել է, որ ավտոմեքենաների վերանորոգման բեռը շատ հաճախ մնում է վարորդ ժամկետային զինծառայողների վրա: Սա առաջին դեպքը չէ, երբ զինծառայողների ծնողները բարձրաձայնում են խնդրի մասին, երբ զինծառայողն է լուծում զինվորական մեքենայի անսարքության խնդիրների հարցը:

Պաշտպանության նախարարությունը հերքեց հրապարակման մեջ տեղ գտած տեղեկությունները, հայտնելով, որ ՀՀ ՊՆ հաշվեկշռում առկա և զինված ուժերի կարիքների համար շահագործվող բոլոր տեսակի մեքենաների տեխնիկական սպասարկման, վերանորոգման և բոլոր այլ ծախսերը բացառապես հոգում է պաշտպանության նախարարությունը, և նախարարության՝ այդ նպատակով հատկացրած միջոցները լիովին բավարար են:

ՀԶԱ Վանաձորի գրասենյակը 2018 թվականին հրապարակված տեղեկանքում[12] անդրադարձել է նմանատիպ դեպքի:

[10] https://shamshyan.com/hy/article/2024/05/03/1260879
[11] https://www.azatutyun.am/a/32903929.html
[12] https://hcav.am/2018-death-cases-army/

2018 թ-ի նոյեմբերի 7-ին Գորիս-Կուբաթլի ավտոճանապարհին ՊՆ բեռնատարի շրջվելու պատճառով մահացել են ժամկետային զինծառայողներ Հայրապետ Նաիրյանը, Հրանտ Գասպարյանը, Էդգար Հունանյանը և Դավիթ Մելքոնյանը: Եվս 8 զինծառայողներ ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել Զանգեզուրի կայազորի զինվորական հոսպիտալ: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ: Բոլոր մահացած զինծառայողները զորացրվելու էին մոտ 2 ամսից:

ՀՀ պաշտպանության նախարարի խոսքերով՝ ծառայողական քննության նախնական արդյունքներով պարզվել է, որ վթարի հանգեցնող պատճառներից մեկը տեխնիկական և ծառայության կազմակերպման հետ կապված մի շարք կոպիտ բացթողումներն են[13]: Մահացած զինծառայողներից մեկի՝ «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, շարքային Էդգար Հունանյանի մտերիմներից մեկի խոսքերով՝ դեպքից մոտ մեկ ամիս առաջ՝ 2018 թ. հոկտեմբերի 13-ին, խոսելով Էդգարի հետ նա տեղեկացել էր, որ զորամասի զինծառայողներին մի քանի օրով տեղափոխելու են Արցախ: Էդգարը նաև հայտնել էր, որ չի ուզում գնալ, քանի որ բեռնատարը սարքին չի եղել և նա մտավախություն է ունեցել, որ ճանապարհին դա կարող է հանգեցնել խնդիրների: Դեպքից 3 օր առաջ Էդգարը հայտնել է, որ այնուամենայնիվ պատրաստվում է մեկնել: Զորամասի սպաներից ոմանք զինծառայողի հորը՝ Արմեն Հունանյանին, հայտնել են որոշ մանրամասներ դեպքի մասին, համաձայն որոնց՝ դեպքին նախորդող ժամանակահատվածում զորամասի հաշվեկշռում հաշվառված «Ուրալ» ավտոմեքենան առաջին գծով բարձրանալիս է եղել, նրան հետևել է Էդգար Հունանյանի վարած զինծառայողներով բեռնատարը: Ինչ-որ պահի երկու մեքենաների մեջտեղում հայտնվել է «Օպել» մակնիշի մարդատար մեքենա, որն իրավունք չուներ շարասյան մեջ մտնել: Այնտեղ կտրուկ շրջադարձ է եղել: «Ուրալը» կանգնել է և ինքնաթիռով ետ է գնացել: Բեռնատարի վարորդ Էդգար Հունանյանը հասկացել է, որ «Օպելը» կճզմվի երկուսի արանքում, և բեռնատարը հետընթաց է կատարել, ինչի պատճառով հետևի անիվով դիպել է քարի և շրջվելով ընկել է ձորը: **Էդգարի ծնողները վրդովվում են այն հանգամանքից, որ եթե մեքենան սարքին լիներ, ապա ողբերգական դեպքը տեղի չէր ունենա՝ շեշտելով ևս մեկ կարևոր հանգամանք, որ մեքենան բեռնատար էր և նախատեսված չէր զինվորներ տեղափոխելու համար[14]:**

Էդգար Հունանյանի մոր խոսքերով՝ մեքենայի անիվներից ու դիմապակուց սկսած մինչև արգելակները անսարքել են եղել: Ծնողներեն իրենք են ուղարկել մեքենայի անսարք և պակասող մասերը՝ ներառյալ նաև մեքենայի յուղը: Էդգարը, հոր օժանդակությամբ, մասնագիտական խորհուրդներով, նորոգել է մեքենան իր ընկերների հետ միասին: Ծնողները պատմում են, որ նախկինում նույն բեռնատարը 2 անգամ հրդեհվել էր: Առաջին անգամ հետադարձ խողովակն ու դիզվառելիքը դուրս էին եկել, լցվել շարժիչի մեջ: Էդգարը փորձելով փրկել բեռնատարը, ձեռքերն այրել էր և տևական ժամանակ մեքենայի ղեկը դժվարությամբ էր բռնում: Մեքենան հրդեհվել էր նաև ողբերգական դեպքից 10 օր առաջ՝ Սյունիքի մարզի Տեղ գյուղում: Զինծառայողի ծնողների խոսքերով՝ ամեն անգամ հրամանատարները Էդգարին հորդորում էին ինքնուրույն լուծում տալ մեքենայի հետ կապված խնդիրներին: Իսկ զինծառայողն իր հերթին ծնողներին խնդրում էր աղմուկ չբարձրացնել դրա վերաբերյալ, որպեսզի ինքը կարողանա «հանգիստ ծառայել և վերադառնալ տուն»[15]: Անսարք մեքենայով գրեթե երկու տարի շարունակ մի քանի ամիսը մեկ անգամ զինծառայողը գնացել է ԱՀ/ԼՂ Ջաբրայիլ (Մեխակավան) և Կուբաթլի (Սանասար):

Զինծառայողի հայրը եղել է դեպքի վայրում, որտեղ սպայական կազմը նրան ցույց է տվել տարածքը, ներկայացրել, որ Հունանյանը հստակ տիրապետել է և՛ իրավիճակին, և՛ իր մասնագիտությանը: Ծնողներին հասած

[13] https://armenpress.am/arm/news/953748.html
[14] http://armtimes.com/hy/article/148066 , https://news.am/arm/news/484037.html
[15] http://armtimes.com/hy/article/148285?fbclid=IwAR1ljcQC3JjKmSu_7UeHg3FB8SgTaUw-hKv1n9gmdfHGUkTcZRi_9dRg7Y8

տեղեկությունների համաձայն, դեպքի պահին իրավիճակը կարգավորելու նպատակով Էդգարի կողքին գտնվող սպան գործի քննության ընթացքում հրահանգավորվել է ներկայացնել իբրև Էդգարն է եղել մեղավորը, չի կարողացել հեռավորություն պահել: Մինչդեռ սպայական անձնակազմը Էդգար Հունանյանի ծնողներին մինչ այդ հավաստիացրել է, որ Էդգարը մեղավոր չէ, քանի որ նա հմուտ վարորդ ու մեխանիկ էր:

Սպաների խոսքով՝ Էդգարը հնարավորություն ուներ դուրս թռչել մեքենայից ու փրկվել, սակայն չի արել դա, փորձել է ամեն կերպ խուսափել դիմացից գնացող մեքենայի հետ բախումից, որպեսզի փրկի մեքենայում գտնվող ընկերներին: Բեռնատարի վթարի և դրա պատճառով զինծառայողների մահվան դեպքով պայմանավորված Պաշտպանության նախարարի հրամանով աշխատանքից ազատվել և նկատողություն կամ խիստ նկատողություն են ստացել մի շարք պատասխանատու հրամանատարներ: Մասնավորապես՝ աշխատանքից ազատվել է 4 պաշտոնյա: Պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին նախազգուշացում է ստացել 2 սպա: ԵՒս 2-ը խիստ նկատողություն են ստացել[16]: **Էդգարի ծնողների կարծիքով՝ աշխատանքից ազատվել են այն մարդիկ, ովքեր անմեղ են և այդ ողջ ընթացքում իրենց տղայի հետ միասին պարբերաբար զբաղվել են մեքենայի անսարքությունների շտկմամբ: Նրանց համոզմամբ՝ պատասխանատվություն են կրում նրանք, ովքեր թույլ օղակ են, թիկունք չունեն: Մինչդեռ ծնողները նշում են, որ պետք է պատասխանատվության ենթարկվեր հրամանատարը:**

2024 թ. տեղի ունեցած ավտովթարի վերոնշյալ դեպքով, հերքելով զինված ուժերում մեքենաների անսարքության մասին զինծառայողների ծնողների հայտնած տեղեկությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ հայտնել է, որ այնուամենայնիվ ՊՆ համապատասխան ստորաբաժանումները հրապարակման մեջ տեղ գտած հայտարարությունների առնչությամբ կանցկացնեն ծառայողական քննություն, կկատարեն անհրաժեշտ ուսումնասիրություններ:

2024 թ. մայիսի 2-ին ՀՀ քննչական կոմիտեն տարածեց հայտարարություն[17] այն մասին, որ քննչական և վարույթային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են պատահարի և դրա պատճառների վերաբերյալ մի շարք էական հանգամանքներ: Մասնավորապես՝ վարորդ հանդիսացող ժամկետային զինծառայողը մեքենան կայանել է ճանապարհի թեք հատվածում՝ խախտելով ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով հաստատված ՀՀ ԶՈՒ ավտոմոբիլային ծառայության կանոնակարգի պահանջները, ըստ որի՝ մեքենաների կանգառն իրականացվում է լավ տեսադաշտով ճանապարհի հարթ տեղանքում: Դրանից հետո վերոհիշյալ ավտոմեքենայում գտնվող անձնակազմի մի մասը փոխարինել է մարտական դիրքում գտնվող անձնակազմին և փոխարինված անձնակազմը, առանց համապատասխան հանդերձավորման, տեղավորվել է «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայում: Նույն կանոնակարգի պահանջների համապատասխան՝ մեքենան պետք է գործարկվի միայն շարժիչի տաքացվելուց հետո, սակայն նշված գործողությունը չի իրականացվել: Շարժիչը գործարկվել է նման եղանակով,

[16] https://armenpress.am/arm/news/954896.html
[17] investigative.am/news/parzvel-en-oural-maknishi-avtomeqenayi-vtarman-patcharnery-zoramasi-erkou-pashtonatar-andz-e-kalanavorvel

քանի որ ավտոմեքենայի ուժակուտակիչ մարտկոցները եղել են ոչ պիտանի: Նաև պարզվել է, որ ՊՆ հաշվեկշռում գտնվող «Ուրալ» մակնիշի հիշյալ ավտոմեքենան տեխնիկական ստուգում է անցել 2023թ. հոկտեմբերին և ճանաչվել է սարքին: Սակայն ավտոմեքենայի ուժակուտակիչ մարտկոցները, որոնք աշխատանքային վիճակի են բերվել 2018 թվականին, ենթակա են եղել շահագործման 4 տարի՝ մինչև 2022 թվականը: Պարզվել է, որ առկա չէ տվյալ մարտկոցների հետագա շահագործման թույլատրության վերաբերյալ զորամասի ներքին հանձնաժողովի համապատասխան ակտ, և այդ պայմաններում դրանք չեն փոխարինվել նորով: Քննության արդյունքում նշված տրանսպորտային միջոցը վարող, ժամկետային ծառայողին ու զորամասի համապատասխան երկու պաշտոնատար անձանց մեղադրանքներ են ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասով:

2024 թվականի հուլիսի 11-ին Սյունիքի մարզի Գորայքի հատվածում տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով մահացել է զինվորական ծառայությունից նույն օրը զորացրված պարտադիր ժամկետային զինծառայող: Ըստ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության վերջինս ծառայակից ընկերների հետ զորամասից քաղաքացիական մեքենայով՝ տաքսիով ուղևորվելիս է եղել դեպի Երևան: Մեքենայի վարորդը ևս մահացել է[18]: Նշված դեպքը ներառված չէ մահվան 40 դեպքերի թվում, քանի որ դեպքի պահին անձը չի հանդիսացել պարտադիր ժամկետային զինծառայող:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «***Զինվորական ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի և բավարարման (ապահովման) ցուցակներից հանելու օրը:»***

Մինչդեռ, Օրենքի նույն հոդվածի 1-ին կետի 1-ին մասով սահմանվում է, որ ***«Զինվորական ծառայության սկիզբ է համարվում... պարտադիր զինվորական ծառայության զորակոչված*** *կամ զորահավաքային զորակոչի կամ պահեստազորային զինվորական ծառայության կանչված* ***քաղաքացիների համար՝ ծառայության վայր մեկնելու նպատակով զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը.»:***

<u>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության սկիզբը սահմանված է «զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը», տրամաբանական է, որ օրենքով պետք է սահմանել նաև, որ զինվորական ծառայության ավարտի՝ զորամասի անձնակազմի և բավարարման</u>

[18] https://www.azatutyun.am/a/zoratsrvats-zintsarayoghner-teghapokhogh-mekenan-vtari-e-entarkvel-nakhnakan-tvyalnerov-ka-erku-zoh/33030792.html

ցուցակներից հանելու օրը ևս պետք է լինի զորացրվելուց հետո զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը: Հետևաբար մինչև զինկոմիսարիատ հասնելու և համապատասխան ցուցակիներից հանվելու պահը անձը պետք է համարվի զինծառայող, ով դեռևս գտնվում է պետության պաշտպանության ներքո:

Այլապես ստացվում է, որ պետությունը պարտավորություն է ստանձնում միայն ածանց զինվորական ծառայության զորակոչելու համար, և զինվորական ծառայության ավարտից հետո որևէ պատասխանատվություն չի կրում զինծառայողների անվտանգ տեղափոխման համար:

Ամփոփելով ավտովթարի հետևանքով զինծառայողների մահվան դեպքերը, արձանագրում ենք, որ ՀՀ կառավարության 2021 - 2026 թթ հնգամյա ծրագրի «զինված ուժերի բարեփոխումների» առաջնահերթություն հանդիսացող «զինված ուժերի նյութատեխնիկական ապահովմանը» զուգահեռ անհրաժեշտ է ապահովել նաև ԶՈՒ-ի համար ձեռք բերված տրանսպորտային միջոցների ժամանակին և որակյալ տեխնիկական սպասարկումը՝ զինծառայողների անվտանգության, կյանքի և առողջության պահմանման ապահովման նպատակով:

Դժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքեր

2020 թվականին դժբախտ պատահարների հետևանքով մահացել է 9 զինծառայող (մահացության ընդհանուր դեպքերի 9%-ը), 2021 թ.՝ 5 զինծառայող (7%), 2022 թ.՝ 2 զինծառայող (3%), 2023 թ.՝ 7 զինծառայող (8%), իսկ 2024 թ. դժբախտ պատահարների հետևանքով մահացել է 5 զինծառայող (13% մահվան դեպքերից):

Աղյուսակ 5. 2020 – 2024 թթ դժբախտ պատահարի հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի թիվը ՀՀ զինված ուժերում

Տարեթիվ	Մահացության ընդհանուր թիվ	Ինքնասպանության և սպանության դեպքեր	Ինքնասպանության և սպանության դեպքերը տոկոսային արտահայտությամբ
2020	100	9	9 %
2021	76	5	7 %
2022	64	2	3 %
2023	83	7	8 %
2024	40	5	13 %

2024 թ. ՀՀ զինված ուժերում դժբախտ պատահարի պատճառով մահացած 5 զինծառայողների դեպքերից 3-ը Դատախազության կողմից որակվել է որպես զինվորական

ծառայության հետ կապված, որոնք գրանցվել են 2 պատահարի պատճառով: Դրանցից մեկը տեղի էր ունեցել հունվարի 13-ին, երբ եղանակային անբարենպաստ պայմաններում մարտական դիրքից մշտական տեղակայման վայր տեղափոխվելու ճանապարհին ձնահյուսի տակ հայտնաբերվեց պարտադիր ժամկետային զինծառայողի դին, ով նույն օրը զորացրվելու էր: Ավելի ուշ ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ Կազմակերպության կողմից ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմամբ պարզ դարձավ, որ դեպքը որակվել է որպես պաշտոնեական անփութություն: Զինվորական ծառայության հետ կապված դասակարգված դժբախտ պատահարի հետևանքով մյուս դեպքը տեղի է ունեցել 2024 թվականի հուլիսի 19-ին, երբ Կոտայքի մարզում ուսումնավարժական թռիչքի ժամանակ վթարված ինքնաթիռում մահացան սպա և կուրսանտ:

Զինվորական ծառայության հետ չկապված դասակարգված դժբախտ պատահարներից մեկի ժամանակ սպան իր վարձակալած բնակարանում մահացած էր հայտնաբերվել: Դեպքի առիթով հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով, այն է՝ *«իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը կամ այդպիսի աշխատանք կատարելը կամ ծառայություն մատուցելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք»:*

Զինվորական ծառայության հետ չկապված մյուս դժբախտ պատահարի պատճառով մահացել էր պայմանագրային զինծառայող, ով էլեկտրահարվել էր:

Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքեր

2020 թվականին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 17 զինծառայող (նշված տարվա մահվան դեպքերի 17%, ներառված չեն 44-օրյա պատերազմին մահացած զինծառայողները), 2021 թ.՝ 19 զինծառայող (25%), 2022 թ.՝ 14 զինծառայող (22%, ներառված չեն 2022-ի մարտական գործողություններին մահացած զինծառայողները), 2023 թ.՝ 19 զինծառայող (23%), 2024 թ. հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 4 զինծառայող (10%):

Աղյուսակ 6. 2020 – 2024 թթ հրադադարի հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի թիվը ՀՀ զինված ուժերում

Տարեթիվ	Մահացության ընդհանուր թիվ	Ինքնասպանության և սպանության դեպքեր	Ինքնասպանության և սպանության դեպքերը տոկոսային արտահայտությամբ
2020	100	17	17 %
2021	76	19	25 %
2022	64	14	22 %
2023	83	19	23 %
2024	40	4	10 %

2024 թվականին հրադադարի ռեժիմի խախտման մեկ դեպքի հետևանքով մահացել են ԵԿՄ 4 անդամներ: Սա 2024 թվականին արձանագրված միակ դեպքն է, երբ արձանագրվել են մահվան դեպքեր հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով:

2024 թ. զինծառայողների մահվան բոլոր դեպքերին առավել մանրամասն անդրադարձ է կատարված Հավելված 2-ում:

Առաջարկություններ

Ամփոփելով զինծառայողների մահացության դեպքերի պատճառներն ու հանգամանքները, ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

Ինքնասպանության և սպանության հետևանքով մահացության դեպքերը նվազեցնելու նպատակով՝

- զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների բոլոր դեպքերով անցկացնել արդյունավետ ծառայողական քննություններ դեպքերի հանգամանքները, ծառայության կազմակերպման ընթացքում արձանագրված թերությունները պարզելու համար և քայլեր ձեռնարկել հետագայում դրանց պատճառների վերացման ու դեպքերի բացառման ուղղությամբ,
- խթանել ՀՀ զինված ուժերում սպա-հոգեբանի ինստիտուտի դերի բարձրացումը՝ ՀՀ ՊՆ բոլոր զորամասերում ծառայության ներգրավելով որակավորված հոգեբանների, ովքեր պլանային կարգով և ըստ անհրաժեշտության առավել հաճախակի կաշխատեն զինծառայողների, այդ թվում նաև հրամանատարական կազմի հետ:

Առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքերը նվազեցնելու և բացառելու նպատակով

- զորակոչի շրջանակներում իրականացվող առողջական վիճակի հետազոտություններն իրականացնել ամբողջ ծավալով, պատշաճ և համալիր,
- զինվորական ծառայության ընթացքում համարժեք արձագանքել զինծառայողների առողջական վիճակի գանգատներին, ժամանակին կազմակերպել վերջիններիս տեղափոխումը զինվորական բժշկական հաստատություններ և ապահովել արդյունավետ բուժման կազմակերպումը,
- օրենքով սահմանել զինվորական ծառայության հետ կապված առողջական խնդիրների հետևանքով տուժած զինծառայողներին և նրանց ընտանիքներին փոխհատուցում տրամադրելու կարգը՝ զինծառայողների առողջական վիճակի վատթարացման դեպքում,
- զինծառայության ընթացքում զինծառայողներին ենթարկել պատշաճ և որակյալ պլանային բժշկական զննությունների՝ առողջական խնդիրները վաղ փուլում հայտնաբերելու և դրանց զարգացումը կանխելու նպատակով,
- պարտադիր ժամկետային զինծառայողներին զինվորական ծառայությունից զորացրելուց առաջ ապահովել զիծառայողների արդյունավետ բժշկական սպասարկումն ու իրականացնել առողջական վիճակի համալիր և ամբողջական հետազոտություններ՝ նույն ծավալով, ինչ նախատեսված է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում: Զորակոչի ընթացքում հետազոտությունների որակյալ իրականացումը և հետագայում՝ զորացրվելուց առաջ զինծառայողի առողջական վիճակի համեմատությունը հնարավորություն կտա հստակ արձանագրել առողջական խնդրի պատճառահետևանքային կապը զինվորական ծառայության հետ:

Ավտովթարի հետևանքով մահվան դեպքերը նվազեցնելու և բացառելու նպատակով

- ապահովել ՀՀ ԶՈՒ-ի համար ձեռք բերված տրանսպորտային միջոցների ժամանակին և որակյալ տեխնիկական սպասարկումը՝ ելնելով զինծառայողների անվտանգության, կյանքի և առողջության պահմանման առաջնահերթությունից:
- զինվորական ծառայության ավարտի՝ անձնակազմի և բավարարման ցուցակներից հանելու օրը օրենքով սահմանել զորացրվելուց հետո զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը: Մինչև զինկոմիսարիատ հասնելու և համապատասխան ցուցակիներից հանվելու պահը անձին համարել զինծառայող, ով դեռևս գտնվում է պետության իրավասության ներքո,
- ավտոտրանսպորտային միջոցի շահագործումը թույլատրել միայն վարորդների պատշաճ ուսուցումից հետո:

● գործնականում պահպանել օրենքով ամրագրված դրույթը և «D» կարգի և «D1» ... ենթակարգի համար նախատեսված տրանսպորտային միջոց վարելու թույլտվություն տալ ՀՀ զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված լինելու դեպքում միայն 19 տարին լրացած, և «B» կամ «C» կարգի կամ «C1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական իրավունքի վկայական ունեցող անձանց»:

2024 թվականին զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի բաշխումն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների

Ըստ Կազմակերպությանը հայտնի դարձած պաշտոնական և զանգվածային լրատվամիջոցներով տարածված տվյալների՝ 2024 թ. ՀՀ զինված ուժերում 40 զինծառայողները մահացել են 33 միջադեպի պատճառով, որոնցից

1 դեպքով (առողջական խնդրի հետևանքով և «զինվորական ծառայության հետ չկապված» դասակարգված) քրեական վարույթ նախաձեռնելու մասին որոշում չի կայացվել:

32-ով (39 զինծառայողի մահվան փաստով) կայացվել է որոշում քրեական հետապնդում հարուցելու մասին հետևյալ հոդվածներով.

● 9-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը: Դեպքերից 2-ով քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով (հանցանքի բացակայություն):

● 6-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով, այն է՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում:

● 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ 2-րդ մասի հատկանիշներ, այն է՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

դեպքերից 3-ով քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով (հանցանքի բացակայություն),

- 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, այն է՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որն առաջացրել է սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հարբած (ոչ սթափ վիճակում) կամ համապատասխան տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, այն է՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք կամ որը կատարվել է ռազմական դրության, 31 պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով (հանցանքի բացակայություն),
- 1-ը (4 զինծառայողի մահվան դեպք)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետերով, այն է՝ 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետերով՝ մի խումբ անձանց կողմից ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ

սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, այն է՝ իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը կամ այդպիսի աշխատանք կատարելը կամ ծառայություն մատուցելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- 1-ը (4 զինծառայողի մահվան դեպք)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, այն է՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ սույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է 2 կամ ավելի անձանց մահ,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, այն է՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ սույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- 1-ը (2 զինծառայողի մահվան դեպք)՝ 539-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, այն է՝ ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս,

- 1-ը՝ 522-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, այն է՝ Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ:,
- 1 դեպքով հարուցված քրեական վարույթի հոդվածը հայտնի չէ:

Նշված 32 միջադեպերի պատճառով մահացած 39 զինծառայողներից 34-ի մահվան փաստով հարուցված քրեական վարույթն ընթացքի մեջ է, 4 դեպքով նախաձեռնված քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հանցանքի բացակայության հիմքով, 1 դեպքով գործը կարճվել է 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հատկանիշներով, 9 դեպքով քրեական գործերը դատարանի քննության փուլում են:

Հավելված 1-ում ներկայացվում է 2024 թ-ին ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը.

Հավելված 1

Հ/Հ	Անուն ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող/նյութեր նախապատրաստող մարմինը	ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
	Կարեն Կարապետյան	09.01.2024	Գեղարքունիք	ՀՀ ՊՆ	հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	սպանություն	Դատաքննություն
	Միքայել Դանիելյան	09.01.2024	Գեղարքունիք	ՀՀ ՊՆ	հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	Ինքնասպան ություն	Նախաքննություն
	Նարեկ Գրիգորյան	11.01.2024	Գեղարքունիք	Դատախազություն	հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ 2-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	ավտովթար	Կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:
	Բենիամին Մանուչարյան	13.01.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ	Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:	պաշտոնեական անփութություն/ձնահոսք	Կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:
	Արթուր Գրիգորյան	06.02.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 3-րդ կայազորային	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	հրդեհ	Նախաքննություն

					քննչական բաժին				
	Գոռ Ասատրյան	12.02.2024	Հայտնի չէ	ՁԼՄ	ՀՀ ՔԿ ՁՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	սպանություն	Դատաքննություն
	Էդուարդ Հարությունյան	13.02.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ՁՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կողմից ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի խախտում	Նախաքննություն
	Հրաչյա Հովհաննիսյան	13.02.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ՁՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կողմից ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի խախտում	Նախաքննություն
	Գագիկ Մանուկյան	13.02.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ՁՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կողմից ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի խախտում	Նախաքննություն
	Արսեն Համբարձումյան	13.02.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ՁՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կողմից	հրադադարի խախտում	Նախաքննություն

							ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով		
	Ավագ Զաքարյան	24.02.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	սպանություն/ ծառայակց	Դատաքննություն
	Ռուբեն Համբարձումյան	04.04.2024	Հայտնի չէ	Դատախազություն	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ, կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	առողջական	Կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:
	Արկադի Ասիլյան	10.04.2024	Հայտնի չէ	Դատախազություն	հայտնի չէ	քրեական վարույթ չի նախաձեռնվել		Առողջական	Նախաքննություն չի նախաձեռնվել
	Արեգ Քերոբյան	12.04.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	ավտովթար/ ՊՆ	Դատաքննություն
	Սլավիկ Վարդանյան	12.04.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	ավտովթար/ ՊՆ	Դատաքննություն
	Դավիթ Հակոբյան	12.04.2024	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին+R17	ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մաս	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	ավտովթար/ ՊՆ	Դատաքննություն
	Ժոզեֆ Ազոյան	12.04.202	Սյունիք	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ	ՀՀ քրեական օրենսգրքի	Մարտական, հատուկ կամ տրանսպորտային	ավտովթար/	Դատաքնն

		4			9-րդ կայազորային քննչական բաժին	538-րդ հոդվածի 4-րդ մաս	մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	ՊՆ	ություն
	Դավիթ Եղոյան	13.04.2024	Հայտնի չէ	Դատախազություն	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	առողջական	Կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:
	Անդրեասով Յուրի	14.04.2024	Հայտնի չէ	Դատախազություն	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	ավտովթար	Նախաքննություն
	Բելլա Զաքարյան	15.04.2024	Հայտնի չէ	Դատախազություն	հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	ինքնասպանություն	Նախաքննություն
	Արամայիս Ղազարյան	19.04.2024	Հայտնի չէ	Դատախազություն	ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչություն	ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներ	Իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը կամ այդպիսի աշխատանք կատարելը կամ ծառայություն մատուցելը, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք	դժբախտ պատահար	Նախաքննություն
	Արտակ Ավալյան	07.05.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	ինքնասպանություն	Նախաքննություն

	Արարատ Արոյան	26.05.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որը անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	ավտովթար	Դատաքննություն
	Արմեն Գասպարյան	14.06.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժին	155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	ինքնասպանություն	Նախաքննություն
	Իշխան Նադարյան	19.06.2024	Գեղարքունիք	Դատախազություն	ՀՀ ԶՔԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	ավտովթար	Կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանի շներով:
	Դավիթ Ներսիսյան	24.06.2024	Հայտնի չէ	Դատախազություն	ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	առողջական	Նախաքննություն
	Հայկ Հարությունյան	29.06.2024	Հայտնի չէ	Դատախազություն	հայտնի չէ	ՀՀ քեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	ավտովթար	Նախաքննություն
	Սարգիս Խաչատրյան	03.07.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	ինքնասպանություն	Նախաքննություն
	Ալիկ Սարգսյան	04.07.2024		Դատախազություն	ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Ավան և Նոր Նորք	155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը	Առողջական	Նախաքննություն

					վարչական շրջանների քննչական բաժին				
	Մանվել Փիլիպոսյան	14.07.2024	Էջմիածին	Դատախազություն	ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժին	Հայտնի չէ	Հայտնի չէ	Դժբախտ պատահար	Նախաքննություն
	Արմեն Խաչատրյան	19.07.2024	Կոտայք	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	539-րդ հոդվածի 4-րդ մաս	Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս	Ավիավթար	Նախաքննություն
	Արմեն Իսահանյան	19.07.2024	Կոտայք	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	539-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներ	Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս	Ավիավթար	Նախաքննություն
	Նապոլիոն Մկրտչյան	26.07.2024	Լոռի-Շիրակ	Դատախազություն	ՀՀ ՔԿ Շիրակի մարզային վարչություն	ՀՀ քեռական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Ավտովթար	Նախաքննություն
	Արմեն Մանուկյան	29.07.2024	Ջերմուկ	Դատախազություն	ՀՀ ՔԿ Վայոց Ձորի մարզային վարչություն	ՀՀ քեռական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Ավտովթար	Նախաքննություն
	Արթուր Գասպարյան	18.08.2024	Մարտունի	Դատախազություն		ՀՀ քեռական օրենսգրքի 342-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներ	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը որն առաջացրել է սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հարբած (ոչ սթափ վիճակում) կամ համապատասխան տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից	Ավտովթար	Նախաքննություն

	Էդգար Ալեքսանյան	02.09.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	ինքնասպանություն	Դատաքննություն
	Վաչագան Ստեփանյան	23.09.2024	Երևան-Մեղրի	Դատախազություն	ՀՀ ՔԿ Վեդիի քննչական բաժին	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար	Նախաքննություն
	Վահե Հարությունյան	06.10.2024	Գեղարքունիք	ՀՀ ՊՆ		522-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներ	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ	Ինքնասպան	Նախաքննություն
	Աղասի Դալլաքյան	13.10.2024	Հայտնի չէ	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶԶԳՎ իններորդ կայազորային քննչական բաժին	522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	Ինքնասպան	Նախաքննություն
	Նարեկ Գրիգորյան	14.11.2024	Իջևան	ՀՀ ՊՆ	ՀՀ ՔԿ ԶԶԳՎ ՀԿԳ բաժին	522 -րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից	Ինքնասպան	Նախաքննություն

Հավելված 2

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. **Էդուարդ Հարությունյան**
2. **Հրաչյա Հովհաննիսյան**
3. **Գագիկ Մանուկյան**
4. **Արսեն Համբարձումյան**

2024 թ. փետրվարի 13-ին Ներքին Հանդի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ Ադրբեջանի ԶՈՒ-ի կրակոցների հետևանքով զոհվել են մարտական հերթապահություն իրականացնող ԵԿՄ անդամներ՝ **Էդուարդ Հարությունյանը** (ծնվ. 1974թ.), **Հրաչյա Հովհաննիսյանը** (ծնվ. 1957թ.),, **Գագիկ Մանուկյանը** (ծնվ. 1982թ.), **Արսեն Համբարձումյանը** (ծնվ. 1979թ.):

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետերով՝ սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կողմից ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով: Նախաքննությունը շարունակվում է:

Բ. Ինքնասպանություն

Զինվորական ծառայության հետ կապված

1. **Արմեն Գասպարյան**

2024 թ. հունիսի 14-ին՝ ՀՀ ՊՆ ՌՈ Սիսիանի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 08:20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության

շրջանի մարտական դիրքում հայտնաբերվել է պայմանագրային զինծառայող Արմեն Գուրգենի Գասպարյանի դին՝ գլխի շրջանում հրազենային գնդակային վիրավորումով: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկվել են քննչական և վարութային անհետաձգելի գործողություններ, այդ թվում՝ դեպքի վայրի և դիակի զննություն: Քրեական վարույթով էական հանգամանքներ պարզելու նպատակով նշանակվել են մի շարք փորձաքննություններ: Կատարվում է նախաքննություն: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ դեպքի հանգամանքները ամբողջությամբ պարզելու ուղղությամբ:

2.Արտակ Ավալյան

2024թ. մայիսի 7–ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի գետնատնակում հայտնաբերվել էր նույն զորամասի պայմանագրային զինծառայող Արտակ Սերյոժայի Ավալյանի դին՝ կզակի շրջանում հրազենային մահացու վիրավորումով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին: Դիակի արտաքին զննությամբ բռնության հետքեր չեն հայտնաբերվել: 39-ամյա պայմանագրային զինծառայող Արտակ Ավալյանի մահը քննվում է որպես ինքնասպանություն:

3.Միքայել Դանիելյան

2024 թ. հունվարի 9-ին ժամը 11-ի սահմաններում ՊՆ N զորամասի կրակային դիրքում հայտնաբերվել է նշված զորամասի սպա, ավագ լեյտենանտ Միքայել Դանիելյանի դին՝ հրազենային վիրավորումով:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով:

4. Սարգիս Խաչատրյան

2024 թվականի հուլիսի 3-ին ՀՀ ՊՆ N զորամասից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 00:45-ի սահմաններում, նույն զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքերից մեկում դիտորդի պարտականություններ կատարելու ընթացքում պայմանագրային զինծառայող Սարգիս Արթուրի Խաչատրյանը իրեն ամրակցված ինքնաձիգից կզակի հատվածում ինքն իրեն պատճառել է հրազենային վնասվածք, որից հետո տեղափոխվել է կայազորային հոսպիտալ, որտեղ, գիտակցության չգալով, ժամը 02:20-ի սահմաններում, գրանցվել է վերջինիս կենսաբանական մահը:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի ՁՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զորամասում կամ զինվորական ծառայության կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դիակի արտաքին զննությամբ բռնության հետքեր չեն հայտնաբերվել, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

Գործի հանգամանքներով նախաքննությունը շարունակվում է:

5. Էդգար Ալեքսանյան

Սեպտեմբերի 2-ին՝ ժամը 10:10-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության գոտու մարտական դիրքում հայտնաբերվել էր զինծառայողի դին՝ կզակի շրջանում հրազենային վնասվածքով:

Ըստ Քննչականի, փաստական տվյալներ են ստացվել, որ պարտադիր ժամկետային զինծառայող Հ. Ե.-ն, տվյալ մարտական դիրքում, որպես դիտորդ ընդգրկված լինելով մարտական հերթապահության, օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 2-ը, տարբեր օրերի, խախտելով կանոնագրքային մի շարք կանոններ, «անձնակազմի ներկայությամբ, պարբերաբար նվաստացրել է նույն մարտական դիրքում որպես դիտորդ ծառայության ընդգրկված զինծառայող Է. Ալեքսանյանի անձնական պատիվն ու արժանապատվությունը, հնչեցրել է հայհոյանքներ, հարվածել»:

«Է. Ալեքսանյանը, հայտնվելով անելանելի վիճակում, 2024թ-ի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 09:45-ի սահմաններում, նույն մարտական դիրքում, դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում, «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով մեկ կրակոց է արձակել կզակի շրջանում և ինքնասպան եղել», - նշված է ՔԿ-ի հաղորդագրության մեջ[19]:

6. Վահե Հարությունյան

2024 թ. հոկտեմբերի 6-ին ՀՀ ՊՆ N զորամասի հրետանային դիվիզիոնի կրակային դիրքից մոտ 30 մետր հեռավորության վրա հայտնաբարվել է նույն դիվիզիոնի զինծառայող Վահե Բագրատի Հարությունյանի դին՝ գլխի շրջանում հրազենային մարմնական վնասվածքով:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, ձևավորվել է քննչական խումբ:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական և ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ ենթադրյալ հանցագործություն կատարողը տուժողի ծառայակիցն է, պարզվել է նաև, որ հերթապահության կրման հետ կապված խնդիրների պատճառով վերջինս որպես հերթապահող հերթափոխի պետ, իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Վ.Հարությունյանի նկատմամբ դրսևորել է դաժան վերաբերմունք, մի քանի անգամ նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ արել, հարվածներ հասցրել:

Վահե Հարությունյանը, հայտնվելով անելանելի վիճակում կրակային դիրքից որոշակի հեռավորության վրա իրեն ամրակցված ինքնաձիգով, կրակոց արձակելով իր գլխին, ինքնասպան է եղել:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա ծառայակցին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Որպես խափանման միջոց՝ նրա նկատմամբ ընտրվել է կալանավորումը:

7. Աղասի Դալլաքյան

[19] https://www.investigative.am/news/zincarayogh-edgar-aleqsanyani-mahvan-depqi-artiv-qreakan-varouyt-e-naxadzernvel

2024թ. հոկտեմբերի 13-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի կենտրոնացման շրջանում հայտնաբերվել էր մարտական հերթապահություն իրականացնող, նույն զորամասի զինծառայող Աղասի Սերոժի Դալլաքյանի դին՝ կզակի շրջանում հրազենային վիրավորումով:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ ՔԿ ՁՔԳՎ իններորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել էր քրեական վարույթ, իրականացված ծավալուն ապացուցողական և վարութային գործողությունների արդյունքում պարզվել էր, որ Ա. Դալլաքյանը մահացել է ինքնասպանություն գործելու հետևանքով:

«Մասնավորապես, նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ նույն զորամասի դասակի հրամանատար, լեյտենանտը, կոչման բերումով լինելով սերժանտների և զինվորների համար պետ, նույն զորամասի շարքային ժամկետային զինծառայներից մեկի հետ խախտել են մարտական հերթապահություն կրելու կանոնները, զենքով ինքնակամ թողել զորամասի պահպանության տեղամասի իրենց կրակային դիրքը և տեղամասի մեկ այլ կրակային դիրքում խմբով՝ միասին, նվաստացրել են մարտական հերթապահության ընդգրկված, նույն զորամասի զինծառայող Աղասի Դալլաքյանի պատիվն ու արժանապատվությունը: Դրա հետևանքով գտնվելով անելանելի վիճակում՝ նշված օրը, նույն կրակային դիրքում դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում, վերջինս իրեն ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով մեկ կրակոց է արձակել կզակի շրջանում և ինքնասպան եղել:

Ներկայացվել է միջնորդություն հսկող դատախազին՝ զինվորական ծառայության մեջ ընդգրկված վերոնշյալ երկու անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Վերջիններս ձերբակալվել են:

Դասակի հրամանատարին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, իսկ շարքային ժամկետային զինծառայողին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

8. Նարեկ Գրիգորյան

Նոյեմբերի 13-ին՝ ժամը 09:20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ ՌՈ բաժնի կարգապահական վաշտում հայտնաբերվել է ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող Նարեկ Խաչատուրի Գրիգորյանի դին՝ կախված վիճակում:

Քննչական կոմիտեից նոյեմբերի 14-ին հաստատել են, որ զինծառայողը կախվել է ռազմական ոստիկանությունում: Հարուցվել է քրեական գործ «անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու» հոդվածով:

Ըստ զինծառայողի ծնողների[20] «Հոկտեմբերին դիրքեր է բարձրացել, ութ հոգով են եղել: Դիրքերում սնունդ են պատվիրել: Իրենց ծառայակից ընկերներից մեկը մատնել է, որ տղաները պիցցա և խորոված են պատվիրել: Այդ տղայի և յոթ հոգու միջև վիճաբանություն է սկսվել: Ռազմական ոստիկանություն է եկել, որոշվել է, որ յոթ հոգին էլ պետք է կարգապահական վաշտ տեղափոխվեն», – մոր տեղեկություններով, հենց այսպես է Նարեկը հայտնվել Ռազմական ոստիկանությունում:

Զինծառայողի մոր խոսքերով՝ դիրքերից տղաներին իջեցրել են զորամաս. «Կամբատը ծեծի է ենթարկել տղաներին, թե ինչու եք դիրքերում պատվերներ կատարում: Շարքի մեջ ծեծել է նրանց»:

«Կարգապահականում էլ ինչ-որ տղա կա, իր հետ է եղել խնդիրը: Գրքի հետ է կապված եղել: Զինվորներից մեկը գիրքը պատռել է, Նարեկն էլ ասել է, որ դա իր զինակցի գիրքն է եղել, տվել է, որ Նարեկը կարգապահականում կարդա: Ասում են, որ դա «չաստ նայողի» մոր գիրքն է եղել, տարել զուգարանում պատռել է, իրբ թե թուղթ չի եղել: Ես չեմ հավատում, որ այս կոնֆլիկտը տղայիս տանելու էր մահվան», – ասել է Նարեկ Գրիգորյանի մայրը:

Քրեական գործով, ըստ նրա, կալանավորված են Նարեկի հետ կարգապահական վաշտ գնացածները, նոյեմբերի 4-ին իրենց զորամասից կարգապահական վաշտ այլ թեմայով եկած երկու հոգին. «Գիտեմ, որ «կալանավորվածների մեջ» սպա էլ կա, ինչպես նաև գիրքը պատռած տղան: Նա ուրիշ զորամասից է եղել»:

Նախաքննությունը շարունակվում է:

Ինքնասպանություն

Զինվորական ծառայության հետ չկապված

9. Բելլա Զաքարյան

Ավագ ենթասպա Բելլա Զաքարյանի ինքնասպանության դեպքի մասին պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկությունների միջոցով:

[20] https://epress.am/2024/12/16/commentary-from-the-mother-of-the-deceased-narek-grigoryan.html

Ըստ ՀՀ դատախազության տեղեկության՝ 2024 թվականի ապրիլի 15-ին, ժամը 7:30-ի սահմաններում ավագ ենթասպայի կախված դին իրենց տան խորդանոցում գտել է մայրը:
Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 162-որդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Սպանություն
Զինվորական ծառայության հետ կապված
Դիտավորյալ սպանություն

1. Ավագ Զաքարյան

2024 թ. փետրվարի 24-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը տարածեց հաղորդագրություն այն մասին, որ նույն օրը ժամը 17:55-ի սահմաններում մահացել է ՊՆ N զորամասի զինծառայող Ավագ Դանիելի Զաքարյանը:

ՊՆ ՌՈ Բերդի բաժնի կողմից նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված անհետաձգելի վարութային և ապացուցողական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ժամը 17:55-ի սահմաններում ՀՀ հյուսիսարևելյան սահմանագծին տեղակայված մարտական դիրքում՝ խրամուղում, անձնական հարցերի շուրջ վիճաբանություն և քաշքշոց է տեղի ունեցել մարտական հերթապահության մեջ ընդգրկված զինծառայող, շարքային Ս.Պ.-ի և շարքային Ա. Զաքարյանի միջև, որի ընթացքում Ս.Պ.-ն լիցքավորել է իրեն ամրակցված ԿԶԳ տեսակի գնդացիրը և, թիրախավորելով Ա. Զաքարյանին, մենահատ կրակոց է արձակել վերջինիս ուղղությամբ՝ նրան պատճառելով հրազենային միջանցիկ վիրավորում: Ստացած հրազենային վիրավորումից զինհոսպիտալ տեղափոխելու ճանապարհին, ժամը 18:05-ից-18:10-ի սահմաններում, Ա. Զաքարյանը մահացել է:

Զինծառայող Ս. Պ.-ին մեղադրանք է ներկայացվել Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Գոռ Ասատրյան

2024թ. փետրվարի 12-ին ՀՀ քննչական կոմիտե ահազանգ է ստացվել այն մասին, որ Ներքին Հանդում ծառայության մեջ ներգրավված երկրապահ կամավորական՝ 1984թ. ծնված Գոռ Ռազմիկի Ասատրյանը առավոտյան քնից չի արթնացել և, ըստ նախնական տվյալների՝ հանկարծամահ է եղել: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով *(սպանություն)* նախաձեռնվեց քրեական վարույթ, որի նախաքննության իրականացումը հանձնարարվել է քննչական խմբին: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ ԵԿՄ անդամը ոչ թե հանկարծամահ է եղել, այլ նրան սպանել են: Տ.Կ.-ի և Գ. Ասատրյանի միջև ծագած վիճաբանությունից հետո, փետրվարի 12-ի գիշերը՝ 00.05-ի սահմաններում, Տ.Կ.-ն ձեռքով ուժգին հարված է հասցրել մահճակալին պառկած Գ. Ասատրյանի պարանոցի շրջանին, ինչի հետևանքով վերջինս ստացել է կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ և մահացել է»,- նշել է Աբրահամյանը՝ տեղեկացնելով, որ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Տ.Կ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

3.Կարեն Կարապետյան

2024 թ. հունվարի 9-ին՝ ժամը 06:20-ի սահմաններում, ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի N մարտական դիրքում հայտնաբերվել է սպա զինծառայող Կարեն Արայիկի Կարապետյանի դին՝ հրազենային վնասվածքով: Ըստ Քննչական կոմիտեի՝ զինծառայողը մահացու հրազենային վիրավորումը ստացել է, նախնական տվյալներով, մարտական հերթապահության մեջ գտնվող ժամկետային զինծառայողի կողմից՝ ինքնաձիգից արձակված կրակահերթից: Սպանության հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ, ժամկետային զինծառայողը ձերբակալվել է: Գործը դատաքննության փուլում է:

Նշենք, որ նույն օրը երեկոյան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց մեկ այլ զինծառայողի՝ ավագ լեյտենանտ Միքայել Դանիելյանի մահվան մասին (ինքնասպանություն), ով ծառայում էր նույն զորամիավորման մեկ այլ զորամասում: Մահվան երկու դեպքերն էլ տեղի են ունեցել նույն զորամիավորման տարբեր զորամասերում. Կարեն Կարապետյանը ծառայում էր Սոթքի զորամասում, իսկ Միքայել Դանիելյանը՝ Ախպրաձորի:

Դ. Առողջական

Զինվորական ծառայության հետ կապված

1. **Ռուբեն Համբարձումյան**

Սպա Ռուբեն Համբարձումյանը ինքնազգացողության վատացման պատճառով շտապօգնության մեքենայով տեղափոխվել է «Սբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, որտեղ ապրիլի 4-ին արձանագրվել է վերջինիս կենսաբանական մահը: ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Դավիթ Եղոյան

ԵԿՄ անդամ Դավիթ Եղոյանի մահվան վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել ոչ պաշտոնական աղբյուրներով և ոչ էլ զանգվածային լրատվամիջոցներում: Կազմակերպությանը դեպքի մասին հայտնել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունը՝ ի պատասխան Կազմակերպության տեղեկատվության հարցման: Մասնավորապես հայտնի է դարձել, որ ԵԿՄ անդամին ինքնազգացողությունը վատանալուց հետո ցուցաբերվել է առաջին բուժօգնություն, սակայն ապրիլի 13-ին արձանագրվել է վերջինիս կենսաբանական մահը: ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

3. Դավիթ Ներսիսյան

2024թ. հունիսի 24-ին ՀՀ ՊՆ ՌՈ Սիսիանի բաժնից հաղորդում է ստացվել՝ նույն օրը՝ ժամը 10:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայող Դավիթ Վահանի Ներսիսյանի մահվան մասին: Ըստ հաղորդման՝ զորամասում՝ շարքում կանգնած ժամանակ, ժամկետային զինծառայողի մոտ ժամը 9:40-ի սահմաններում նկատվել է ինքնազգացողության հանկարծակի վատացում և գիտակցության կորուստ, որի կապակցությամբ շտապ կարգով տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, որտեղ, ժամը 10:00-ի սահմաններում, արձանագրվել է զինծառայողի կենսաբանական մահը: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

4. Ալիկ Սարգսյան

Պայմանագրային զինծառայող Ալիկ Սարգսյանը հանկարծամահ է եղել 2024 թվականի հուլիսի 4-ին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում, որտեղ ստացիոնար բուժման մեջ էր գտնվում 2024 թվականի հունիսի 25-ից: Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ: Մահվան դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

Առողջական
Ծառայության հետ չկապված

5. Արկադի Ասիլյան

2024 թ. ապրիլի 10-ին պայմանագրային զինծառայող Արկադի Ասիլյանը «սուր կորոնար համախտանիշ» ախտորոշմամբ տեղափոխվել է Վանաձորի ԲԿ, որտեղ ապրիլի 10-ին գրանցվել է վերջինիս կենսաբանական մահը: Ըստ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ դեպքի առթիվ քրեական վարույթ չի նախաձեռնվել:

Ե. Ավտովթարներ
Զինվորական ծառայության հետ կապված

1. **Արեգ Քերոբյան**
2. **Սլավիկ Վարդանյան**
3. **Դավիթ Հակոբյան**
4. **Ժոզեֆ Ազոյան**

2024թ. ապրիլի 12-ին ՀՀ ՊՆ հաշվեկշռում գտնվող «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայի վթարման հետևանքով մահացել է 4 ժամկետային զինծառայող, ևս 19 զինծառայող ստացել է տարբեր աստիճանների վնասվածքներ: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում, ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար, մեղադրանքներ էին ներկայացվել տրանսպորտային միջոցը վարող ժամկետային ծառայողին ու զորամասի համապատասխան երկու պաշտոնատար անձի: ՀՀ ՊՆ N զորամասի նշված պաշտոնատար անձինք խախտել են տրանսպորտային միջոց շահագործելու կանոնները՝ անտեսելով՝ ՀՀ

զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ՀՀ զինված ուժերի ավտոմոբիլային ծառայության կանոնագրքի, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ: Ավելի ուշ ՀՀ քննչական կոմիտեն հայտարարեց[21], որ մեղադրանք է ներկայացվել ևս 2 պաշտոնատար անձի: Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա, ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասով, մեղադրանքներ են ներկայացվել նաև նույն զորամասի՝ տեխնիկական ապահովման, սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի տեխնիկական վիճակի, դրանց ճիշտ շահագործման, նորոգման և էվակուացման, անձնակազմի տեխնիկական պատրաստության համար պատասխանատու, ինչպես նաև՝ հավաքակայանից դուրս եկող և վերադարձող մեքենաների տեխնիկական վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականություններով օժտված ևս երկու պաշտոնատար անձի: Նախաքննությունը շարունակվում է:

5. Արարատ Արոյան

2024 թվականի մայիսի 26-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ ՊՆ N զորամասից հաղորդում է ստացվել, որ ժամը 11:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի զորավարժարանում զինտեխնիկան վարման ընթացքում պատահական բախվել է կայանված «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայի թափքին, և թափքում գտնվող նույն զորամասի զինծառայող Ա. Արոյանը նույն օրը՝ ժամը 11:30-ի սահմաններում, ճակատաքունքային հատվածում ստացած վնասվածքներով ընդունվել է կայազորի զինվորական հոսպիտալ, որտեղ ժամը 13:40-ին վերջինս մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 3-րդ մասով (մարտական հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որը անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

[21] https://www.investigative.am/news/pn-oural-maknishi-avtomeqenayi-4-zincarayoghi-mahvan-elqov-oghbergakan-vtari-veraberyal-varouytov-meghadranq-e-arajadrvel-zoramasi-evs-erkou-pashtonatar-andzi

Ավտովթար

Զինվորական ծառայության հետ չկապված

6. **Նարեկ Գրիգորյան**

Հանգստի մեջ գտնվող սպա Նարեկ Գրիգորյանի մեքենան 2024 թվականի հունվարի 11-ին, ժամը 8:30-ի սահմաններում վթարված վիճակում հայտնաբերվել է Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի 58-րդ կմ-ում, մեքենայից քիչ հեռու հայտնաբերվել է Նարեկ Գրիգորյանի դին:

ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:

7. **Յուրի Անդրեասով**

Գտնվելով արձակուրդի մեջ, պայմանագրային զինծառայող Յուրի Անդրեասովը իր կողմից վարած ավտոմեքենայով Կապան քաղաքի Սպանդարյան փողոցում դուրս է եկել երթևեկելի գոտուց ու ընկել Ողջի գետը: Պայմանագրայինի դին հայտնաբերվել է գետում, մեքենայից 1 մետր հեռավորության վրա: ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը հետագայում կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հատկանիշներով:

8. **Իշխան Նադարյան**

Պայմանագրային Իշխան Նադիրյանը գտնվելով հանգստի մեջ իր կողմից վարած մեքենայով հունիսի 19-ին, ժամը 16:00-ի սահմաններում Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի 38-րդ կիլոմետրում վազանց կատարելիս բախվել է հանդիպակաց գոտիով երթևեկող բեռնատարին, ինչի հետևանքով պայմանագրային զինծառայող Իշխան Նադիրյանը տեղում մահացել է:

ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որն ավելի ուշ կարճվել է Կարճվել է ՀՀ քրեական դատավարության 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:

9. **Հայկ Հարությունյան**

Պայմանագրային զինծառայող Հայկ Հարությունյանը և Գ. Գ.-ն 2024 թվականի հունիսի 29-ին, ժամը 23:30-ի սահմաններում «ԼԱԴԱ 21015» մակնիշի ավտոմեքենայով Երևան-Մեղրի ավտոճանապարհի 134-րդ կմ հատվածում բախվել է մեկ այլ քաղաքացու կողմից վարվող «Զիլ» մակնիշի ավտոմեքենային, ինչի հետևանքով, ինչի հետևանքով «ԼԱԴԱ»-ի ուղևոր Հայկ Հարությունյանը տեղում մահացել է:

ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

10. Նապոլիոն Մկրտչյան

Պայմանագրային զինծառայող Նապոլիոն Մկրտչյանը մահացել է 2024 թվականի հուլիսի 26-ին Վանաձոր-Գյումրի ավտոճանապարհին տեղի ունեցած վթարի պատճառով: Քրեական վարույթը նախաձեռնվել է ՀՀ ՔԿ Շիրակի մարզային վարչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

11. Արմեն Մանուկյան

Պայմանագրային զինծառայող Արմեն Մանուկյանը 2024 թվականի հուլիսի 27-ին հանգստի մեջ գտնվելու ժամանակահատվածում իր վարած մեքենայով Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղում ավտովթարի է ենթարկվել, ինչի հետևանքով տեղում մահացել է:

ՀՀ ՔԿ Վայոց Ձորի մարզային վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

12. Արթուր Գասպարյան

2024 թվականի օգոստոսի 18-ին հանգստի մեջ գտնվող պայմանագրային զինծառայող Արթուր Գասպարյանը Մարտունի քաղաքում վրաերթի է ենթարկվել (հեծանիվ վարելու ընթացքում): Հիվանդանոց հասնելու ճանապարհին զինծառայողը մահացել է:

ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

13. Վաչագան Ստեփանյան

Աշխարհազորային գումարտակի սպան 2024 թվականի օգոստոսի 23-ին Մեղրի-Երևան ավտոճանապարհին քաղաքացի Ն. Բ.-ի վարած մեքենայով վթարի է ենթարկվել և տեղում մահացել:

Վարույթն իրականացնում է ՀՀ ՔԿ Վեդիի քննչական բաժինը:

Զ. Դժբախտ պատահար

Զինվորական ծառայության հետ կապված

1. Բենիամին Մանուչարյան

2024 թվականի հունվարի 13-ին եղանակային խիստ անբարենպաստ պայմաններում մարտական դիրքից մշտական տեղակայման վայր տեղափոխվելու ճանապարհին ձնահյուսի տակ հայտնաբերվել էր զինծառայող Բենիամին Մանուչարյանի դին, ով նույն օրը զորացրվելու էր: Կազմակերպության 2024 թվականի առաջին եռամսյակում ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմամբ պարզ դարձավ, որ դեպքը որակվել է որպես պաշտոնեական անփութություն:

Ավելի ուշ՝ հունվարի 17-ին ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտնեց, որ ժամկետային զինծառայող Բենիամին Մանուչարյանի մահվան դեպքով պարտականությունները ոչ պատշաճ կատարած անձինք ծառայողական քննությունից հետո պատասխանատվության կենթարկվեն: Միևնույն ժամանակ նախարարը նշեց, որ կա հիմնավոր վարկած, որ եղել է արտաքին ճնշում սպաների վրա: Ավելի ուշ Կազմակերպության 2024՝ թվականի առաջին եռամսյակում ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմամբ պարզ դարձավ, որ դեպքը որակվել է որպես պաշտոնեական անփութություն:

Նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, այն է՝ հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Դժբախտ պատահար

Զինվորական ծառայության հետ չկապված

1. **Արամայիս Ղազարյան**

Ծառայության չներկայանալու կապակցությամբ իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում ապրիլի 19-ին իր վարձակալած բնակարանի լոգարանում հայտնաբերվել է Ա. Ղազարյանի դին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, այն է՝ «իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը կամ այդպիսի աշխատանք կատարելը կամ ծառայություն մատուցելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ»:

2. Մանվել Փիլիպոսյան

2024 թվականի հուլիսի 14-ին պայմանագրային զինծառայող Մանվել Փիլիպոսյանը Էջմիածին քաղաքում գնդակն իջեցնելու նպատակով բարձրացել է տանիք, որի ժամանակ դիպել է էլեկտրալարին և հոսանքահարվել: Պայմանագրայինը տեղափոխվել է Էջմիածնի բժշկական կենտրոն, որտեղ հուլիսի 15-ին գրանցվել է վերջինիս կենսաբանական մահը:

Վարույթն իրականացնում է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը:

Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոնները խախտելը:

1. **Արմեն Իսախանյան (սպա)**
2. **Արմեն Խաչատրյան (կուրսանտ)**

2024 թվականի հուլիսի 19-ին Կոտայքի մարզում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ինքնաթիռ է վթարվել, որի պատճառով մահացել են սպա Արմեն Իսախանյանն ու կուրսանտ Արմեն Խաչատրյանը:

Քննչական կոմիտեի տարածած տեղեկությունների համաձայն դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ Քրեական օրենսգրքի 539 հոդվածի 4-րդ մասով՝ ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մահ:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

Է. Հրդեհ

Զինվորական ծառայության հետ կապված

3.Արթուր Գրիգորյան

Փետրվարի 6-ին՝ ժամը 13:20-ի սահմաններում, ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի կացարանին կից տեղադրված տնակում բռնկված հրդեհի հետևանքով մահացել է վարժական հավաքների կանչված պահեստազորային Արթուր Վարուժանի Գրիգորյանը: Դատախազության կողմից դեպքն այս պահին որակված է որպես սպանություն: Նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: